 մեծ Ովկիանոսին վրայ, Աւստրալիայի ու Չի-
 նաստանի մէջ կը տեսնուի, բայց մեր կողմերը
 չիտեսնուիր :

2. Լոսնոյ խաւարոճ, Գեկտեմբերի 5.
 Դասնական խաւարոճ է, որն որ մեծ Ովկիանո-
 սին ու Հնդկաց ծովուն վրայ, Աւստրալիայի ու
 Ասիայի մէջ կը տեսնուի, բայց մեր կողմերը
 չիտեսնուիր :

3. Արեւոս խաւարոճ, Գեկտեմբերի 19.
 Բըրախին խաւարոճ է, որն որ Աղլանդեան
 Ովկիանոսին վրայ ու Հարաւային Ամերիկայի մէջ
 ընդորովին կը տեսնուի. նոյնպէս եւ Եւրոպայի
 ու Ափրիկէի մէկ մասին մէջ. իսկ Կոստանդնու-
 պոլիս միայն խաւարման մէկ մասը կը տեսնուի :

Աս (1861) տարի արեգական վրայ երկու
 խաւարումներէն ի զատ ուրիշ երեւոյթ մ'ալ
 պիտ'որ տեսնուի. այսինքն Փայլածու մոլորակն
 արեգական վրայէն անցնելով, որ է ցորեկ ա-
 տեն արեւուն ու երկրի մէջ տեղը գտնուելով՝
 արեւուն վրայ բծի մը պէս պիտ'որ երեւայ : Աս
 երեւոյթն աստեղագէտները՝ Փայլածոսին արե-
 քական վրայէն կամ արժեւն անցնելը (Անց փայ-
 լածոսի զերեօթ արեքական) կ'անուանեն :

Արդ՝ նախ պէտք է գիտնալ՝ որ մոլորակաց
 արեգական վրայէն անցնելը կամ անցն ուրիշ
 բան չէ՝ բայց եթէ՝ մոլորակի մը երկրի ու արե-

գական մէջ տեղը գանուած ատենը՝ (երկրէն նայելով)՝ արեգական սկաւառակին կամ երեսին վրայ տեսնուիլը :

Երկրորդ պէտք է գիտնալ՝ որ որովհետեւ միայն երկու մոլորակներ, այսինքն Փայլածու եւ արուսի, երկրէն աւելի մօտ են արեգական, ուստի եւ իրենց ճամբաները երկրի ճամբուն ու արեգական մէջ կ'իյնան, անոր համար միայն աս երկու մոլորակներուն արեգական առջեւէն անցնիլը կը տեսնենք :

Փայլածու մոլորակն ուրիշ մոլորակներուն մէջ արեգական ամենէն մօտ դիրք ու շրջան ունի : Պարզ աչքով իբր պայծառ փայլող ու ճերմակ լուսով՝ չորրորդ կամ հինգերորդ կարգի հաստատուն աստղ մը կ'երեւայ : Երբ որ երեւալու կը սկսի՝ երեկոյեան արշալուսին ատենը պարզ աչքով շատ դժուարաւ կը նշմարուի . բայց կամաց կամաց աւելի տեսանելի կ'ըլլայ : Աստեղագէտներն ալ իրենց խիստ ընտիր հեռագիտակներովն աս մոլորակին վրայ՝ երկրէն շատ հեռու եւ արեգական շատ մօտ ըլլալուն համար՝ շատ դիտողութիւններ չեն կրնար ընել, որովհետեւ արեգական սաստիկ պայծառ լուսոյն մէջ անտեսանելի կ'ըլլայ : Միայն քննած գտած են՝ որ բոլորաձեւ է ու լուսնոյ պէս այլ եւ այլ կերպարանքներ՝ այսինքն լուսնին ծննդեան, առաջին քառորդին, լրման ու վերջին քառորդին ատեններն ունեցած ձեւերն ունի : Իր մարմինը կամ մեծութիւնն եօթը հին մոլորակներուն մէջ (որոնց մէկն է երկիրը) ամենէն պզտիկ է . ինչու որ իր երկակըտուրը կամ տրամագիծը երկրի երկակտուրին երեքին մէկն է, այսինքն 300 մղոն . իսկ իր երեսին կամ մակերեւութին ընդարձակութիւնը մէկ միլիոն 73,000 քառակուսի մղոն է . որ է՝ երկրի մակերեւութին հազիւ ասաներորդ մասը :

Թէպէտ եւ փայլածուն ուրիշ ամէն մոլորակներէն ուստի եւ երկիրէն աւելի մօտ է ա-

րեգական, սակայն եւ այնպէս իր անկից ունեցած խիստ պզտիկ հեռաւորութիւնն ալ իբր եօթն ու կէս միլիոն մղոն է. իսկ խիստ մեծ կամ վերջին հեռաւորութիւնն՝ ինն ու կէս միլիոն մղոնէն աւելի է: Բայց երկրագունդին ու փայլածունին մէջ եղած հեռաւորութիւնն աւելից շատ աւելի է. ինչու որ երկրին խիստ մօտ եղած Ժամանակն ալ՝ անկից 10 միլիոն մղոն հեռաւորութիւն ունի, իսկ խիստ հեռու եղած Ժամանակը՝ 30 միլիոն մղոն:

Արովհետեւ փայլածուն ուրիշ ամէն մոլորակներէն աւելի արեգական մօտ է, եւ որովհետեւ արեգակն ամէն մոլորակներուն շարժման աղբիւրն է, անոր համար իր շարժումը կամ ընթացքն անոնց ամենուն շարժումէն աւելի շուտ է. անանկ որ իր միջին արագութեան ատենն ամէն մէկ մանրերկրորդի մէջ վեց մղոնէն աւելի տեղ կը քալէ, որ է ըսել՝ մէկ օրուան մէջ 578,880 մղոն ճամբայ կ'ընէ. կամ աւելի յայտնի ըսելու համար, փայլածուն մէկ մանրերկրորդի մէջ այնչափ տեղ յառաջ կ'երթայ, որչափ որ հասարակ քայլերով քալող մարդ մը 12½ Ժամու մէջ կ'երթայ: Իր բոլոր շրջանը՝ (երկրագունդին վրայէն նայելով կամ դիտելով) 115 օրուան, 21 Ժամու, 3 վայրկենի ու 3¼ մանրերկրորդի (իբր չորս ամսու) մէջ կը կատարէ:

Աս շրջանին մէջ փայլածուն արեգակէն 28 երկրագրական աստիճան կը հեռանայ. ասիկակ է իր՝ արեգակէն ունեցած խիստ մեծ հեռաւորութիւնը. այսչափ հեռանալէն ետքը՝ նորէն կը դառնայ կը սկսի արեգական մերձենալ, որուն մինչեւ 18 երկրագրական աստիճան կը մօտենայ. ասիկակ է իր խիստ մեծ կամ վերջին մերձաւորութիւնը կամ արեւամերձութիւնը: Թէ որ իր խիստ մեծ հեռաւորութեան ատենն արեգական արեւմտեան դին կը գանուի ու առտուան դէմ կը տեսնուի, ան ատեն իր ըն-

Թացքն ուղղագնաց կամ յառաջախաղաց է, որով դէպ արեգակը կը քալէ ու անոր հետ իր վերին միաւորութիւնը կ'ունենայ: Աս ատեն երկրագունդէն խիստ հեռու եղած ժամանակն է եւ իր ընթացքին շուտութիւնն ուրիշ ամէն ատեններէն աւելի է: Անկից ետքն իր ընթացքը կը սկսի կամացնալ կամ հանդարտնալ, ու այնպէս միշտ կամացնալով՝ արեգակէն 28 աստիճան կը հեռանայ, ուստի եւ իր վերջին հեռաւորութեան կը հասնի: Հոս հասածին պէս՝ քիչ մ'ատեն (ըստ երեւութի) կը կենայ կը հանդչի. անկից ետքը կը սկսի յետախաղաց ընթացքով դէպ արեգակը քալել, ու իր արագութիւնն աւելցընելով՝ արեգական հետ իր ստորին միաւորութիւնը կ'ունենայ: Աս ատեն երկրագունդին խիստ մօտ եղած (երկրամերձութեան) ժամանակն է: Աս ստորին միաւորութեան ատենն իբր պզտիկ՝ կլորակ ու սեւ բիծ մը արեգական վրայէն արեւելքէն դէպ արեւմուտք անցնիլը կը տեսնուի: Ահա աս է՝ Փայլածոսին արեգական վրայէն անցնիլը, (Անց փայլածոսի շերտոս արեգական):

Փայլածուն միայն տարւոյն երկու ամիսներուն՝ Մայիսի ու Նոյեմբերի սկիզբները (ըստ հին տոմարի՝ Ապրիլի ու Հոկտեմբերի վերջերը) արեգական առջեւէն կ'անցնի: Հետեւեալ աղիւսակին մէջ կը տեսնուի եօթանասուն տարւան միջոցին մէջ տեսնուած ու տեսնուելու Անցերուն տարիներն ու օրերը:

1835ին Նոյեմբերի 7 (Հոկտ. 26).

1845ին Մայիսի 8 (Ապրիլ. 26).

1848ին Նոյեմբերի 9 (Հոկտ. 28).

1861ին Նոյեմբերի 12 (Հոկտ. 31).

1868ին Նոյեմբերի 5 (Հոկտ. 24).

1878ին Մայիսի 6 (Ապրիլ. 24).

1881ին Նոյեմբերի 8 (Հոկտ. 27).

1891ին Մայիսի 10 (Ապրիլ. 28).

1894ին Նոյեմբերի 10 (Հոկտ. 29):

Ժ Ե Մ Ա Ն Ա Կ Ա Ք Ի Բ Կ Ա Ն

Եւրոպայի վեհապետաց ցեղարանութիւնը:

ԱՆԳՂԻԱ (Մայրաքաղաք՝ Լոնտոն. կրօն՝ անգղիական.) Թագուհի՝ Վիկտորիա Ա. (Անգղիայի Թագաւորներուն Գէորգ Գ.ին ու Գուիլիելմոս Գ.ին եղբօրը Գէնզի դուքսին՝ Եդուարդին դուստրը,) ծնած 24 Մայ. 1819. յաջորդեց իր հօրեղբօրը Գուիլիելմոս Գ.ին 20 Յուն. 1837. պսակուած 28 Յունիսի 1838. ամուսնացած 10 Փետ. 1840 Սաքսոնեան - Գուպուրկ - Կոթայի Ալլպերդ իշխանին հետ. (ծն. 26 Օգ. 1819). — Թագաժառանգ Ալլպերդ Եդուարդ Ուելսի իշխան, ծն. 9 Նոյ. 1841:

ԱՆՀԱԼԴ-ՊԷՌՆՊՈՒՐԿ (Մայրաքաղ. Պալէնշդէտդ. կրօն՝ աւետարանական.) դուքս՝ Աղէքսանդր Կարոլոս, ծն. 2 Մարտ. 1805. յաջորդեց իր հօրը 24 Մարտ. 1834. ամսն. 30 Հոկտ. 1834 Հոլշդայն - Ալիքսպուրկի Փրիդերիկա իշխանուհւոյն հետ. (ծն. 9 Հոկտ. 1811):

ԱՆՀԱԼԴ - ՏԵՍՍԱԻ - ԳԷՕԹԷՆ (Մայրաքաղ. Տեսսաւ. կրօն՝ աւետարանական.) դուքս՝ Լէոբոլդոս Փրիդերիկոս, ծն. 1 Հոկտ. 1794. յաջորդեց իր հաւուն 9

Օգոստ. 1817. ամսն. 18 Ապր. 1818
Պռուշի Փրիդերիկա իշխանուհւհոյն հետ.
(Ծն. 30 Սեպտ. 1796. † 1 Յունու. 1850.)
— Ժառանգ՝ Լէոբոլդոս Փրիդերիկոս,
Ծն. 29 Ապր. 1831:

ԱՒՍՏՐԻԱ (Մայրաքղ. վիէննա.
կրօն՝ ուղղափառ.) կայսր՝ Փրանկիսկոս
Յովսէփ, Ծն. 18 Օգ. 1830. [Ժադ. 2
Դեկ. 1848. ամսն. 24 Ապր. 1854 Պաւիէ-
րայի [Ժադաւորական ցեղէն Եղիսաբէթ
դ.քսուհոյն հետ. (Ծն. 24. Դեկ. 1837):
— Թագաժառանգ՝ Ռուտովիոս, Ծն.
21 Օգ. 1858:

ԲԱՐՄԱ (Մայրաքղ. Բարմա. կրօն՝
ուղղափառ.) դ.քսուհի խնամակալ՝ (27
Մարտ 1854. էրկանը՝ Փերդինանդոս Կա-
րոլոս Լուդ. դուքսին սպաննուելէն ետ-
քը,) Մարիամ Լուիզ Պուրպոնեան՝ Կա-
րոլոս Ժ. Գաղղիայի [Ժադաւորին ուղղոյն
Պեռիի դքսին դուստրը, Ծն. 21 Սեպ.
1819. ամսն. 10 Նոյ. 1845. — Դուքսան-
չափահաս՝ Ռոբերտոս, Ծն. 9 Յուլ. 1848:

ԲԵՂԴԻԱ (Մայրաքղ. Պրիւսէլ.
կրօն՝ հիմնական վեհապետի աւետարա-
նական, աւերութեան՝ ուղղափառ.) [Ժա-
դաւոր՝ Լէոբոլդոս Ա. Ծն. 16 Դեկ. 1790.
[Ժադ. 21 Յուլ. 1831. ամսն. 9 Օգ.
1832 Լուիզ իշխանուհոյն՝ Գաղղիայի
Լուդ. Փիլիպ. [Ժադաւորին դասերը հետ.

(Ծն. 3 Ապր. 1812. † 11 Հոկ. 1850.)
— Թագաժառանգ՝ Լէոբոլդոս Լուդովիկոս,
Պրապանդի դուքս, Ծն. 9 Ապր. 1835.
ամսն. 10 Օգ. 1853 Մարիամ Հենրիկէ
Աւստրիայի արքիդքսուհւոյն հետ. (Ծն.
23 Օգ. 1836):

ԲՈՐԴՈՒԿԱԼ (Մայրաքղ. Լիսաբոն.
կրօն՝ ուղղափառ.) Թագաւոր՝ Պետրոս
Ե. տէ Ալգանդարա. Ծն. 16 Սեպտ. 1837.
Թագ. 15 Նոյ. 1853. ամսն. 25 Մայ. 1858
Հոհէնցոլէոն - Սիկմաուինկէնի Ստեփա-
նիա իշխանուհւոյն հետ. (Ծն. 15 Յուլ.
1837. † 16 Յուլ. 1859.) — Թագա-
ժառանգ՝ եղբայրը Լուդ. Փիլիպպոս,
Ծն. 31 Հոկտ. 1838:

ԳԱՂՂԻԱ (Մայրաքղ. Բարիդ. կրօն՝
ուղղափառ.) կայսր՝ Լուդովիկոս Նաբո-
լէոն Գ. Ծն. 20 Ապր. 1808. Թագ. 2
Դեկ. 1852. ամսն. 29 Յունու. 1853 Եւ-
զինիա Մոնդիշոյի դքսուհւոյն (Դէպպի
կոմսուհւոյն) հետ. (Ծն. 5 Մայ. 1826.)
— Թագաժառանգ՝ Եւզինէոս Լուդովի-
կոս Նաբոլէոն. Ծն. 16 Մարտ. 1856:

ԴԱՆԻԱ (Մայրաքղ. Գոթենհալն.
կրօն՝ աւետարանական.) Թագաւոր՝ Փրի-
դերիկոս Է. Կարոլոս Գրիստիան. Ծն. 6
Հոկ. 1808. Թագ. 20 Յունու. 1848.
Երրորդ անգամ ամսն. 7 Օգ. 1850 Դան-
ների Լուիզ կոմսուհւոյն հետ. (Ծն.

1814): — Թագաժառանգ՝ Փերդինանդ (Տորեդրայր) ծն. 22 Նոյ. 1792:

ԴՈՍԿԱՆԱ (Մայրաքղ. Ֆիորենցա. կրօն՝ ուղղափառ.) մեծ դուքս՝ Լէոբոլդոս Բ. ծն. 3 Հոկ. 1797. տիրեց 18 Յունի. 1824. երկրորդ անգամ ամսն. 7 Յուն. 1833 Նէապոլսոյ թագաւորական զեղէն՝ Մարիամ Անտոնիա իշխանուհւոյն հետ. (ծն. 19 Դեկտ. 1814). — Ժառանգ՝ Փերդինանդոս, ծն. 10 Յուն. 1835:

ԼԻԲԻԷ-ՇԱՒՈՒՄՊՈՒՐԿ (Մայրաքաղ. Պիւքէպուրկ. կրօն՝ կալուինական.) իշխան՝ Գէորգ Գուիլիելմ. ծն. 20 Դեկտ. 1784. յաջորդեց իր հօրը 13 Փետր. 1787. տիրեց 18 Ապր. 1807. ամսն. 23 Յուն. 1816 Իդա կարոլինա վալտէքի իշխանուհւոյն հետ. (ծն. 26 Սեպտ. 1796). — Ժառանգ՝ Ատոլփոս Գէորգ, ծն. 1 Օգ. 1817. ամսն. 25 Հոկտ. 1844 վալտէքի Հերմինէ իշխանուհւոյն հետ. (ծն. 29 Սեպտ. 1827):

ԼԻԲԻԷ-ՏԷԴՄՈՒՏ (Մայրաքաղ. Տէգմսլտ. կրօն՝ կալուինական.) իշխան՝ Լէոբոլդոս, ծն. 1 Սեպտ. 1821. տիրեց 1 Յունու. 1851. ամսն. 17 Ապր. 1852 Շվարցպուրկ - Ռուտոլզգատդի Էղիսաբեթ իշխանուհւոյն հետ. (ծն. 1 Հոկտ. 1833):

ԼԻԽՒԴԷՆՇԻԱՅՆ (իշխանանիստ

աւան՝ Վատուց . բայց իշխանը դրեթէ միշտ Վիէննա իր փառաւոր պալատին մէջ կը բնակի . կրօն՝ ուղղափառ .) իշխան՝ Յովհաննէս , ծն . 5 Հոկ . 1840 . յաջորդեց իր հօրը՝ 12 Նոյ . 1858 : (Աս իշխանին կալուածներուն մեծ մասը՝ իբր 10¹/₄ քա . մղ . երկիր՝ Աւստրիայի ու Պառլի տէրութեանց մէջ է , 600,000 բնակիչով ու իբր չորս միլիոն ֆրանք տարեկան եկամուտքով) :

ՀԱՆՆՈՎԷՐ (Մայրաքղ . Հաննովեր . կրօն՝ աւետարանական .) Թագաւոր՝ Գէորգ Փրիդերիկոս Ե . ծն . 27 Մայ . 1819 . Թագ . 18 Նոյ . 1851 . ամսն . 18 Փետ . 1843 Սաքսոնեան - Ալդէնպուրկի Մարիամ Աղէքսանդրա իշխանուհւոյն հետ . (ծն . 14 Ապր . 1818 .) — Թագաւորականգ՝ Երնեստոս Աւգոստոս , ծն . 21 Սեպտ . 1845 :

ՀԷՍՍԷՆ - ԳԱՍՍԷԼ . (Մայրաքղ . Գասսէլ . կրօն՝ կալուինական .) կայսրնաիր իշխան՝ Փրիդերիկոս Գուլիլմ . Ա . ծն . 20 Օգ . 1802 . հօրը հետ տիրել սկսաւ 30 Սեպտ . 1831 . առանձինն տիրեց 20 Նոյ . 1847 . ամսն . Հանաւի իշխանուհւոյն՝ Շառլոտայի կոմսուհւոյն Գերտրուդային հետ . (ծն . 18 Մայ . 1806) :

ՀԷՍՍԷՆ - ՀՈՄՊՈՒՐԿ (Մայրաքղ . Հոմպուրկ . կրօն՝ կալուինական .) երկրա-

կալ կոմս՝ Փերդինանդոս , ծն . 26 Ապր .
1783 . յաջորդեց իր եղբորը Տ Սեպտ . 1848 :

ՀԷՍՍԷՆ - ՏԱՐՄՇԴԱՏԴ (Մայրաքղ . Տարմշդատդ . կրօն՝ լուտերական .)
մեծ դուքս՝ Լուդովիկոս Գ . ծն . 9 Յուն .
1806 . տիրեց 16 Յուն . 1848 . ամսն . 26
Դեկտ . 1833 Պաւիերայի Մաթիլդէ կա-
րողինա իշխանուհւոյն հետ . (ծն . 30 Օգ .
1813) . — Ժառանգ՝ եղբայրը Կարոլոս .
ծն . 23 Ապր . 1809 :

ՀԷՍՍԷՆ - ՖԻԼԻԲԻՍԹԱԼ . (Մայրաքղ . Ֆիլիբբսթալ . կրօն՝ կալուինական .)
երկրակալ կոմս՝ Կարոլոս . ծն . 22
Մայ . 1803 . յաջորդեց իր հօրը 25 Դեկտ .
1849 . ամսն . 9 Հոկ . 1845 վիւրթէմ-
պերկի Մարիամ Աղէքսանդրա իշխա-
նուհւոյն հետ . (ծն . 25 Մարտ . 1818) .
— Ժառանգ՝ Երնեստոս Եւգինէոս , ծն .
20 Դեկտ . 1846 :

ՀԷՍՍԷՆ - ՖԻԼԻԲԻՍԹԱԼ - ՊԱՌԻՍ -
ՖԷԼՏ (Մայրաքղ . Աւիուսդենաւ . կրօն՝
կալուինական .) երկրակալ կոմս՝ Ալէքսիոս
Գուիլ . Երնեստոս . ծն . 13 Սեպտ . 1829 .
յաջորդեց իր հօրը 17 Յունի . 1851 . ամսն .
27 Յունի . 1854 Պաուլի Մարիամ Լուիզ
Աննա իշխանուհւոյն հետ . (ծն . 1 Մարտ .
1829) :

ՀՈԼԼԱՆՏԱ (Մայրաքղ . Ամսդեր-
տամ . Թագաւորանիստ քղ . Հասկ՝ կամ

Լա Հէյ . կրօն՝ աւետարանական .) թա-
ղաւոր՝ Գուխլիեւմոս Գ . Աղէքս . Պօղոս .
ծն . 19 Փետր . 1817 . թագ . 17 Մարտ .
1849 . ամսն . 18 Յունի . 1839 Վիւր-
թեմակերկի Յովիա իշխանուհւոյն հետ .
(ծն . 17 Յունիս 1818) . — Թագածա-
ւանդ Գուխլիեւմոս Օրանիայի իշխան .
ծն . 4 Սեպ . 1840 :

ՀՈՀԷՆՅՈՒԼԼԷՌՆ - ՀԷԻՒՆԿԷՆ
(Մայրաքղ . Հէխինկէն . կրօն՝ ուղղա-
փառ .) իշխան՝ Փրիդերիկոս Գուխլ . Կոս-
տանդ . ծն . 16 Փետր . 1801 . ամսն . եր-
կրորդ անգամ Սիպուրկի սեպուհին գըս-
տերը Ամալիա օրիորդին հետ . որն որ տի-
րող տանէ չըլլալուն՝ աս ամուսնութենէ
ծնած զաւակները իրենց հօրը իշխանու-
թեան չեն յաջորդեր :

ՀՈՀԷՆՅՈՒԼԼԷՌՆ - ՍԻԿՄԱՌԻՒՆ-
ԿԷՆ . (Մայրաքղ . Սիկմառինկէն . կրօն՝
ուղղափառ .) իշխան՝ Կարոլոս Անտոն .
ծն . 7 Սեպտ . 1811 . ամսն . 21 Հոկտ .
1834 Պատէնի Յովսէփա իշխանուհւոյն
հետ . (ծն . 21 Հոկտ . 1813 .) — Ժառանգ՝
Լէոբոլդոս , ծն . 22 Սեպտ . 1835 :

ՀՈՒՄԱՅԻ ՏԷՐՈՒԹԻՒՆ (Մայ-
րաքղ . Հռոմ . կրօն՝ ուղղափառ .) Քահա-
նայապետ՝ Պիոս Թ . (յառաջ՝ Յովսէփ
Մարիամ՝ Մասթայի Ֆերեգդիի կոմս .)
ծն . Սինիկալիա 13 Մայ . 1792 . բոլոր

ուղղափառ եկեղեցւոյ գլուխ ընտրեցաւ
16 Յունի. 1846:

ՄԷՔԼԷՆՊՈՒՐԿ-ՇՒՐԷԼԻՑ (Մայ-
րաքղ. Նայշդրէլից. կրօն՝ լուտերական.)
մեծ դուքս՝ Գէորգ Փրիդերիկոս, ծն.
12 Օգ. 1779. յաջորդեց իր հօրը 6 Նոյ.
1816. ամսն. 12 Օգ. 1817 Հէսսէն-Գաւ-
սելի Մարիամ Գուիլիելմա իշխանուհւոյն
հետ. (ծն. 21 Յունու. 1796.) — Ժաւ-
աանգ՝ Փրիդերիկոս Գուիլ. ծն. 17 Հոկտ.
1819. ամսն. 28 Յունի. 1843 (Անգղիայի
Թագուհւոյն հօրեղբօրը Աւգ. Փրիդե-
րիկոս Գէյմպրիճի դքսին դստերը) Աւ-
գոստա իշխանուհւոյն հետ. (ծն. 19
Յուլի. 1822):

ՄԷՔԼԷՆՊՈՒՐԿ-ՇՎԷՐԻՆ (Մայ-
րաքղ. Լուտվիկսլուսգ. կրօն՝ լուտերա-
կան.) մեծ դուքս՝ Փրիդերիկոս Փրանկ.
ծն. 28 Փետր. 1823. յաջորդեց իր հօրը
7 Մարտ. 1842. ամսն. 3 Նոյ. 1849
Ռայս-Շլայցի Աւգոստա իշխանուհւոյն
հետ. (ծն. 26 Մայ. 1822.) — Ժաւաանգ՝
Փրիդերիկոս Փրանկ. ծն. 19 Մարտ. 1831:

ՄՈՆԱԳՈՅ (Մայրաքղ. Մոնազոյ
կամ Մուրժ. կրօն՝ ուղղափառ.) իշխան՝
Կարոլոս Հոնսրիոս Կախմալաի, ծն. 8
Գեկտ. 1818. յաջորդեց իր հօրը 20 Յունի.
1856. ամսն. 28 Սեպտ. 1846 Մէրո-
տեան ցեղէն Անտոնիա կոմսուհւոյն

Հեա. (ծն. 28 Սեպտ. 1828.) — Ժառանգ՝
Ալբերդոս Հոնորիոս, ծն. 13 Նոյ. 1848:

ՄՈՏԵՆԱ (Մայրաքղ. Մոսենա.
կրօն՝ ուղղափառ.) դուքս՝ Փրանկիսկոս Ե.
ծն. 1 Յունի. 1819, յաջորդեց իր հօրը
21 Յունու. 1846. ամսն. 30 Մարտ 1842
Պաւիէրայի Ադէլգունդէ իշխանուհւոյն
Հեա. (ծն. 19 Մարտ. 1823):

ՅՈՒՆԱՍՏԱՆ (Մայրաքղ. Աթէնք.
կրօն թագաւորի՝ ուղղափառ, տէրու-
թեան՝ յունագաւան.) թագաւոր՝ Ոթոն
Ա. Պաւիէրայի իշխան, ծն. 1 Յունի.
1815. թագ. 27 Մայ. 1832, իշխելու
սկսաւ 1 Յունի. 1835. ամսն. 22 Նոյ.
1836 Օլտենպօլի Ամալիա իշխանուհւ-
ոյն Հեա. (ծն. 21 Դեկ. 1818):

ՆԱՍՍԱԻ (Մայրաքղ. Պիպէրիս.
կրօն՝ աւետարանական.) դուքս՝ Ադօլփոս
Գուիլիելմ. ծն. 24 Յուլի. 1817. յա-
ջորդեց իր հօրը 20 Օգ. 1839. երկրորդ
անգամ ամսն. 23 Ապր. 1851 Անհալդ-
Տեսաւի Ատէլայիա իշխանուհւոյն Հեա.
(ծն. 25 Դեկտ. 1833.) — Ժառանգ՝
Գուիլիելմոս Ադէքսանդր, ծն. 22 Ապր.
1852:

ՆԷԱՊՈԼԻՍ, ՍԻԿԻԼԻԱ (Մայրաքղ.
Նէապոլիս. կրօն՝ ուղղափառ.) թա-
գաւոր՝ Փրանկիսկոս Բ. ծն. 16 Յունու.
1836. թագ. 22 Մայ. 1859. ամսն. 2

Փետր. 1859 Պաւիէրայի թագաւորական
ցեղէն Մարիամ Սովիա Ամալիա դքսուհւ-
ւոյն հետ. (ծն. 4 Հոկտ. 1841.) — Թա-
գաժառանգ՝ եղբայրը Լուդովիկոս, ծն.
1 Օգոստ. 1838:

ՇՈՒԵՏ ՈՒ ՆՈՐՈՒԵԳԻԱ (Մայ-
րաքղ. Շիժոքհոլմ. կրօն՝ լուտերական.)
Թագաւոր՝ Կարոլոս Ժե. ծն. 3 Մայ.
1826. Թագ. 10 Յուլի. 1859. ամսն. 19
Յունի. 1859 Հոլանդիայի Լուիզ. Գուիլ.
Աղէքսանդրա իշխանուհւոյն հետ. (ծն.
5 Օգոստ. 1828.) — Թագաժառանգ՝
եղբայրը Ոսկար. ծն. 21 Յունու. 1829:

ՇՎԱՐՑՊՈՒՐԿ-ՌՈՒՏՈՒՆԼԱՆԴԻԱՏԻ
(Մայրաքղ. Ռուտոլլզդատդ. կրօն՝ լու-
տերական.) իշխան՝ Կիւնթէր Փրիդ. ծն.
6 Նոյ. 1793. տիրեց 6 Նոյ. 1814. եր-
կրորդ անգամ ամսն. 7 Օգ. 1855 Ան-
հալդի Հեղինէ իշխանուհւոյն հետ. (ծն.
1 Մարտ. 1835.) — Ժառանգ՝ եղբայրը
Ալբերդոս, ծն. 30 Ապր. 1798:

ՇՎԱՐՑՊՈՒՐԿ - ՍՈՆՏԷՐՍՀԱՒ-
ԶԷՆ (Մայրաքղ. Սոնտերսհաւզէն. կրօն՝
լուտերական.) իշխան՝ Կիւնթէր Փրիդ.
Կարոլոս, ծն. 24 Սեպտ. 1801. տիրեց
3 Սեպտ. 1835. ամսն. 29 Մայ. 1835
Հոհէնլոհէ-Էօրինկէնի Մաթիլդէ իշխա-
նուհւոյն հետ. (ծն. 3 Յուլ. 1814.) — Ժա-
ռանգ՝ Կարոլոս Կիւնթէր, ծն. 7 Օգ. 1830:

ՊԱՏԻՆ (Մայրաքղ. Գարլորուհէ. կրօն՝ աւետարանական.) մեծ դուքս՝ Փրիզերիկոս, ծն. 9 Սեպտ. 1826. իշխ. 24 Ապր. 1852. ամսն. 20 Սեպտ. 1856 Պառուշի Լուիզ Մարիամ իշխանուհւոյն հետ. (ծն. 3 Դեկտ. 1838.) — Թագաժառանգ՝ Փրիզերիկոս Գուիլիելմոս, ծն. 9 Յուլ. 1857:

ՊԱԻԻԻՐԱ (Մայրաքղ. Միւնչէն. կրօն՝ ուղղափառ.) Թագաւոր Մաքսիմիլիան Յովսէփ Բ. ծն. 28 Նոյ. 1811. Թագ. 20 Մարտ. 1848. ամսն. 12 Հոկտ. 1842 Պառուշի Մարիամ Փրիզերիկա իշխանուհւոյն հետ. (ծն. 15 Հոկ. 1825.) — Թագաժառանգ՝ Լուդովիկոս Ութոն, ծն. 25 Օգ. 1845:

ՊՈՒՆՇՎԱՅԿ-ՎՈՒՖԻՆՊԻԻԳԻԷԼ (Մայրաքաղաք՝ Պաւանշվայկ. կրօն՝ աւետարանական.) դուքս՝ Աւգոստ. Լուդով. Գուիլիելմոս, ծն. 25 Ապր. 1806. արեց 25 Ապր. 1831:

ՊՈՒՈՒՇ (Մայրաքղ. Պերլին. կրօն՝ աւետարանական.) Թագաւոր՝ Փրիզերիկոս Գուիլիելմոս Գ. ծն. 15 Հոկ. 1795. Թագ. 7 Յունի. 1840. ամսն. 29 Նոյ. 1823 Պաւիերայի Եղիսաբէթ իշխանուհւոյն հետ. (ծն. 13 Նոյ. 1801.) — Թագաժառանգ՝ Եղբայրը Գուիլիելմոս Լուդովիկոս. ծն. 22 Մարտ. 1797:

ՌԱՅՍ-ԿՌԱՅՅ (Մայրաքղ. Կռայց. կրօն՝ լուտերական.) իշխան՝ Հենրիկոս Ի. ծն. 29 Յունի. 1794. յաջորդեց իր եղբորը 31 Հոկտ. 1836. Երկրորդ անգամ ամսն. 1 Հոկտ. 1839 Հեսսէն-Հոմպուրկի Կարոլինա իշխանուհւոյն հետ. (ծն. 19 Մարտ. 1819.) — Ժառանգ՝ Հենրիկոս, ծն. 28 Մարտ. 1846:

ՌԱՅՍ-ՇԼԱՅՅ (Մայրաքղ. Շլայց. կրօն՝ լուտերական.) իշխան՝ Հենրիկոս Կէ. ծն. 20 Հոկտ. 1789. յաջորդեց իր եղբորը 19 Յունի. 1854. ամսն. 18 Ապր. 1820 Ռայս-Էպէրստորֆի Սոփիա Ատէլայիտ իշխանուհւոյն հետ. (ծն. 28 Մայ. 1800.) — Ժառանգ՝ Հենրիկոս, ծն. 28 Մայ. 1832:

ՌՈՒՍԱՍՏԱՆ (Մայրաքաղ. Բեդերսպուրկ, կրօն՝ յունաղաւան.) կայսր՝ Աղէքսանդր Բ. ծն. 29 (17) Ապր. 1818. [Ժազ. 2 Մարտ. (18 Փետր.) 1855. ամսն. 28 (16) Ապ. 1841 Հեսսէն-Տարմշդատի Մարիամ Աղէքսանդրովնա իշխանուհւոյն հետ. (ծն. 8 Օգ. 1824.) — Թագաժառանգ՝ Նիկողայոս, ծն. 20 (8) Սեպ. 1843:

ՍԱՐԴԻՆԻԱ (Մայրաքղ. Գուրին. կրօն՝ ուղղափառ.) [Ժազաւոր՝ Վիկտոր Էմմանուէլ Բ. ծն. 14 Մարտ. 1820. [Ժազ. 3 Ապր. 1849. ամսն. 12 Ապր.

1842 Աւսարիայի Մարի. Ատեւայիտ ար-
քիդքոուհւոյն հետ. (ծն. 3 Յունի. 1822.
† 20 Յուն. 1855.) — Թագաժառանգ՝
Հումպերդ, ծն. 14 Մարտ. 1844:

ՍԱՔՍՈՆԻԱ (Մայրաքղ. Տրեզանէն.
կրօն թագաւորին՝ ուղղափառ, տէրու-
թեան՝ լուտերական.) թագաւոր՝ Յով-
հաննէս, ծն. 12 Դեկ. 1801. յաջորդեց
իր եղբօրը 9 Օգ. 1854. ամսն. 21 Նոյ.
1822 Պաւիէրայի Ամալիա իշխանուհւոյն
հետ. (ծն. 13 Նոյ. 1801.) — Թագա-
ժառանգ՝ Ալպերդ, ծն. 23 Ապր. 1828.
ամսն. 18 Յունի. 1853 կուստաւոս վա-
ղայի իշխանին դստերը կարողինա իշխա-
նուհւոյն հետ. (ծն. 5 Օգ. 1833):

ՍԱՔՍՈՆԵԱՆ - ԱԼԴԻՆՊՈՒՐԿ.
(Մայրաքղ. Ալդէնպուրկ. կրօն՝ լուտերա-
կան.) դուքս՝ Երնեստոս Փրիդեր. ծն.
16 Սեպտ. 1826. յաջորդեց իր հօրը 3
Օգ. 1853. ամսն. 28 Ապր. 1853 Ան-
հալդ - Տեսաւի Ագնէս իշխանուհւոյն
հետ. (ծն. 24 Յունի. 1824):

ՍԱՔՍՈՆԵԱՆ - ԳՈՊՈՒՐԿ - ԿՈԹԱ
(Մայրաքղ. Կոթա. կրօն՝ լուտերական.)
դուքս՝ Երնեստոս Բ. Աւգոստոս, ծն. 21
Յունի. 1818. յաջորդեց իր հօրը 29 Յու-
նու. 1844. ամսն. 3 Մայ. 1842 Պատէնի
Աղէքսանդրա իշխանուհւոյն հետ. (ծն.
6 Դեկտ. 1820):

ՍԱՔՍՈՆԵԱՆ - ՄԱՅՆԻՆԿԷՆ -
ՀԻԼՏՊՈՒՐԿՀԱԻԶԷՆ (Մայրաքղ. Մայ-
նինկէն. կրօն՝ լուտերական.) դուքս՝ Բեռ-
նարդոս, ծն. 17 Գեկտ. 1800. յաջոր-
դեց իր հօրը 24 Գեկտ. 1803 ճօրը խնա-
մակալութեան տակ. տիրեց 17 Գեկտ.
1821. ամսն. 23 Մարտ. 1825 Հէսսէն-
Գասսէլի Մարիամ Փրիդերիկա իշխա-
նուհւոյն հետ. (ծն. 6 Սեպտ. 1804.) —
Ժառանգ՝ Գէորգ, ծն. 2 Ապր. 1826:

ՍԱՔՍՈՆԵԱՆ - ՎԱՅՄԱՌ - ԱՅ-
ԶԷՆԱԽ (Մայրաքղ. Վայմար. կրօն՝ լու-
տերական.) մեծ դուքս՝ Կարոլոս Աղէքս.
Աւգոս. Յովհ. ծն. 24 Յունի. 1818. յա-
ջորդեց իր հօրը 8 Յուլի. 1853. ամսն. 8
Հոկտ. 1842 Հոլանտայի Սոփիա իշխա-
նուհւոյն հետ. (ծն. 8 Ապր. 1824.) —
Ժառանգ՝ Կարոլոս Աւգոստոս, ծն. 31
Յուլի. 1844:

ՍԻԿԻԼԻԱ, տես Նէապոլիս:

ՍՊԱՆԻԱ (Մայրաքղ. Մատրիտ.
կրօն՝ ուղղափառ.) թագուհի՝ Մարիամ
Իզապէլլա Բ. ծն. 10 Հոկ. 1830. թագ.
2 Հոկտ. 1833. ամսն. 10 Հոկ. 1846
Փրանկիսկոս Ասիդեան իշխանին հետ.
(ծն. 13 Մայ. 1822.) — Թագաժառանգ՝
Ալֆոնսոս, ծն. 29 Նոյ. 1857:

ՎԱՅՄԱՌ, տես Սաքսոնեան-Վայ-
մար-Այզնախ:

ՎԱԼՏԵՔ (Մայրաքղ. Գորպասխ. իշխանանիսա քղ. Արոլլէն. կրօն՝ աւետարանական.) իշխան՝ Գէորգ Վիկտոր, ծն. 14 Յունու. 1831. տիրեց 17 Օգ. 1852. ամսն. 26 Սեպտ. 1853 Նասսաւի Հեղինէ իշխանուհւոյն հետ. (ծն. 12 Օգ. 1831):

ՎԻՒՐԹԵՄՊԵՐԿ (Մայրաքաղաք Շտուդկարդ. կրօն՝ լուտերական.) Թագաւոր՝ Գուիլիելմոս Ա. ծն. 27 Սեպ. 1781. Թագ. 30 Հոկ. 1816. երկրորդ անգամ ամսն. 15 Ապր. 1820 հօրեղբօրը դատերը Վիւրթեմպերկի Պաւլինէ իշխանուհւոյն հետ. (ծն. 4 Սեպ. 1800.) — Թագաժառանգ՝ Կարոլոս Փրիդերիկոս Աղէքսանդր, ծն. 6 Մարտ 1823. ամսն. 1 Յուլ. 1846 Ռուսաստանի Օլկա իշխանուհւոյն հետ. (ծն. 11 Սեպտ. 1822):

ՏԱՃԿԱՍՏԱՆ (Մայրաքաղ. Կոստանդնուպոլիս. կրօն՝ մահմետական.) Սուլդան՝ Ապտիւլ Մէճիտ Խան, ծն. 23 Ապր. 1823. (12 Շապան 1238.) յաջորդեց իր հօրը Սուլդան Մահմուտ Բ. Խանին 2 Յուլ. 1839. (19 Բէպիւլ ախրը 1255.) եւ է Օսմանեան ցեղէն 31 երորդ վեհապետը ու Կոստանդնուպոլսոյ առմանէ (1453) ետքը 28 երորդ Թագաւորը: — Ժառանգ՝ եղբայրը Ապտիւլ Ազիզ. ծն. 9 Փետր. 1830. (15 Շապան 1245):

ՕԼՏԵՆՊՈՒՐԿ (Մայրաքաղ. Օլտենպուրկ. կրօն՝ լուտերական.) մեծ գուքս՝ Նիկ. Փրիզ. Պետրոս ծն. 8 Յուլ. 1827. տիրեց 27 փետր. 1853. ամսն. 10 փետր. 1852 Սաքսոնեան-Ալդէնպուրկի Եղիսաբէթ իշխանուհւոյն հետ. (ծն. 26 Մարտ. 1826.) — Ժառանգ՝ Փրիզերիկոս Աւգոստոս, ծն. 16 Նոյ. 1852:

Լւրոպայէն գուրս Հարաւային Ամերիկայի մէջ է նոր կայսրութիւնը

ՊՐԱԶԻԼԻԱ. (Մայրաքաղ. Ռիոյ տէ Ժանէյրոյ. կրօն՝ ուղղափառ.) կայսր՝ Պետրոս Բ. (Տօմ փետրոյ տէ Ալգանդարա.) ծն. 2 Դեկտ. 1825. իր հօրը Պետրոս Ա. կայսեր (7 Ապր. 1831) հրաժարելէն ետքն անոր յաջորդեց, ու 23 Յուլի. 1840 սկսաւ տիրել եւ 18 Յուլի. 1841 պսակեցաւ կայսերական թագով. ամսն. 4 Սեպտ. 1843 Սիկիլիայի թագաւորական ցեղէն՝ Թերեզիա Բրիտանիէ իշխանուհւոյն հետ. (ծն. 14 Մարտ 1822):



Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն

Գ Լ Ս Ա Ա Ո Ր Հ Ա Փ Ե Ր :

Գ Ա Ղ Ղ Ի Ա

Մեդր, որն որ երկրիս միջօրէականին քառորդին 10,000,000 երորդ մասն է = 3 ոտք, 1 մատ ու 11 գիծ վիէննայի = 1 մէյմար արշընը, 7 սաղ փարմազ ու 7 սաղըր փարմազ:

Տեռմեդր (տասնամէդր) = 10 մէդր:

Էրմեդր (հարիւրամէդր) = 100 մէդր:

Քիւմեդր (հազարամէդր) = 1000 մէդր = 1303 արշըն, 19 սաղ փարմազ 16 սաղըր փարմազ:

Միւրմեդր (բիւրամէդր) = 10,000 մէդր:

Տեռմեդր (տասնորդամէդր) = $\frac{1}{10}$ կամ 0,1 մէդր = 3 մատ ու 9 գիծ վիէնն. = 3 սաղ փարմազ ու 3 սաղըր փարմազ:

Սմեդրմեդր (հարիւրորդամէդր) = $\frac{1}{100}$ կամ 0,01 մէդր = $7\frac{1}{2}$ սաղըր փարմազ:

Միւլմեդր (հազարորդամէդր) = $\frac{1}{1000}$ կամ 0,001 մէդր:

Թուզ = 6 ոտք = 1,94904 մէդր = 6,327 ոտք վիէնն. Ոտք = 12 մատ: Մատ = 12 գիծ:

Մըն (Lieue) = 2282 [Ժոազ]:

Ար = 100 քառակուսի մէդր:

Լիդր = 1 խորանարդ տէսիմէդր:

Սրեր = 1 խորանարդ մէդր:

Ա Ն Գ Ղ Ի Ա

Ոտ (Foot) = 0,3048 մէդր = $11\frac{1}{2}$ մատ վիէնն. = 9 սաղ փարմազ ու 18 սաղըր փարմազ:

Երբ = 3 ոտք = 2,891 ոտք վիէնն. = 1 արշըն, 5 սաղ փարմազ ու 2 սաղըր փարմազ:

Ֆեռհը = 6 ոտք:

Բերը = $5\frac{1}{2}$ էարա:

Ֆերլը = 220 էարա:

Մշն = 8 ֆէրլըն = 1,609.314 քիլոմէր = 2131 արշն:

Բոո = 1 քառակուսի քէրչ:

Բոո = 1210 քառ. եարտ:

Էո = 4 քառ. բուտ:

Կէլլըն = 4,543 լիգր:

Բեո = 2 կէլլըն:

Պլլլլ = 8 կէլլըն:

Ա Ի Ս Տ Ի Ա

Ոոո = 0,316.103 մէր = 10 սաղ փարմագ:

Քլլլլ = 6 ոտք: Ոտք = 12 մատ: Մատ = 12 գիծ:

Մշն = 4000 քլաֆթէր = 7¹/₂ քիլոմէր:

Եո = 1600 քառ. քլաֆթէր:

Այո = 40 մատ = 56³/₅ լիգր:

Մո = 4 սայթլ = 1,415 լիգր:

Սոլլ = 19,3536 խորանարդ մատ:

Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն

Կանոնն կամ Մեյթեր արշնը = 24 սաղ փարմագ = 0,757 մէր = 2 ոտք, 4 մատ ու 9 գիծ վիէնն. Սաղ փարմագ = 24 սաղըր փարմագ:

Արշն = 8 բուս = 0,685 մէր = 2 ոտք ու 2 մատ վիէնն.

Էոո = 8 բուս = 0,6479 մէր = 2 ոտք ու 8 գիծ վիէնն. Բուս = 2 կիրահ:

Մշն = 2192 կանգուն = 1680 մէր = 5305 ոտք վիէնն.

Տեոն = 1600 քառ. կանգուն:

Ռ Ո Ի Ս Ա Ս Տ Ա Ն

Սոլլ = 3 արշն:

Արշն = 0,705 մէր = 2,252 ոտք վիէնն. = 22 սաղ փարմագ ու 5 սաղըր փարմագ:

Վերոյ = 500 արշին = 1,0668 քիլոմէտր = 3375,5 ոտք Վիէնն.

Գլխաւոր կշիռներ:

Գ Ա Ղ Ղ Ի Ա

Կրօճ, որն որ մէկ խորանարդ սանդիմէզր զուտ ջուրի կշիռն է = 13,714 գարեհատ (կրան) Վիէնն. = 20 ցորեան տաճկի:

Տեփուրօճ (տասնակրամ) = 10 կրամ:

Էփուրօճ (հարիւրակրամ) = 100 կրամ:

Քիլոգրօճ (հազարակրամ) = 1000 կրամ = 312 տիրէմ ու 4 ցորեան = 1 լիտր, 25 լոթ ու 34 գարեհատ Վիէնն.

Տեփուրօճ (տասնորդակրամ) = $\frac{1}{10}$ կամ 0,1 կրամ:

Սանդիկրօճ (հարիւրորդակրամ) = $\frac{1}{100}$ կամ 0,01 կրամ:

Միլլիկրօճ (հազարորդակրամ) = $\frac{1}{1000}$ կամ 0,001 կրամ:

Կենդինար = 100 լիտր: Կենդինար մէզրական = 100 քիլոկրամ:

Լիտր (լիվր) = 16 ունկի = $\frac{1}{2}$ քիլոկրամ = 156 տիրէմ ու 2 ցորեան: Ունկի = 36 ցորեանահատ (կրէն):

Տալարաշափ (թոնոյ) 2000 լիտր:

Ա Ն Գ Ղ Ի Ա

Փանդր թրոյ = 12 ունկի = 373,24 կրամ = 117 տիրէմ ու 40 ցորեան: Փանդր կամ լիտր = 16 ունկի = 453,59 կրամ = 140 տիրէմ ու 28 ցորեան = 26,9168 լոթ:

Ունկի (Աւնա) = 20 Փէնիուսյդ = 0,028346 քիլոկրամ = 8 տիրէմ ու 50 ցորեան:

Փէնիուսյդ = 24 ցորեանաշափ = 1,55 կրամ = 31 ցորեան տաճկ.

Ա Ի Ս Տ Ի Ա

Կե՛նդրէ՛նար = 100 լիար կամ ֆունտ:

Մարֆ = $\frac{1}{2}$ ֆունտ:

Լէրր (ֆունտ) = 16 ունկի = 32 լոթ = 560
կրամ = 175 տիրէմ:

Լա՛ն = 240 դարեհատ (կրան) = $17\frac{1}{2}$ կրամ
= $5\frac{1}{2}$ տիրէմ:

Ռ Ո Ի Ս Ա Ս Ս Ա Ն

Փո՛ւնդ = 36 լոթ = 96 սոլոթնիք = $409\frac{1}{2}$
կրամ:

Փո՛ւր = 40 ֆունտ:

Տ Ա Ճ Կ Ա Ս Ս Ա Ն

Պո՛ւնթար = 44 օքթա = 56 քիլոկրամ ու 408
կրամ:

Օռո՛ւ = 400 տիրէմ = 1282 կրամ = 2 ֆունտ
8 լոթ վիէնն.

Տիրէ՛մ = 4 տէնկ = 3,005 կրամ = 0,1824
լոթ վիէնն.

Տե՛նկ = 4 չէքիրտէք:

Չէ՛րտէք = 4 ցորեան:



Տ Ա Խ Տ Ա Կ
Տ Ո Կ Ո Ս Ե Ա Ց

| Դրամա- գրուած | Տարի | | 6 ամիս | | 3 ամիս | | 1 ամիս | | 1 շաբաթ | | |
|------------------|------|----|--------|----|--------|--------------------------------|--------|--------------------------------|---------|--------------------------------|--------------|
| | դր | փր | դր | փր | դր | փր | դր | փր | դր | փր | |
| 10 | — | 16 | — | 8 | — | 4 | — | 1 ¹ / ₃ | — | 1 ¹ / ₃ | 0/0 4 |
| 50 | 2 | — | 1 | — | — | 20 | — | 6 ² / ₃ | — | 1 ² / ₃ | |
| 100 | 4 | — | 2 | — | 1 | — | — | 13 ¹ / ₃ | — | 3 ¹ / ₃ | |
| 500 | 20 | — | 10 | — | 5 | — | 1 | 26 ² / ₃ | — | 16 ² / ₃ | |
| 1000 | 40 | — | 20 | — | 10 | — | 3 | 13 ¹ / ₃ | — | 33 ¹ / ₃ | |
| 10 | — | 18 | — | 9 | — | 4 ¹ / ₂ | — | 1 ¹ / ₂ | — | 1 ¹ / ₃ | 0/0 4 1/2 |
| 50 | 2 | 10 | 1 | 5 | — | 22 ¹ / ₂ | — | 7 ¹ / ₂ | — | 1 ² / ₃ | |
| 100 | 4 | 20 | 2 | 10 | 1 | 5 | — | 15 | — | 3 ³ / ₄ | |
| 500 | 22 | 20 | 11 | 10 | 5 | 25 | 1 | 35 | — | 18 ³ / ₄ | |
| 1000 | 45 | — | 22 | 20 | 11 | 10 | 3 | 30 | — | 37 ¹ / ₂ | |
| 10 | — | 20 | — | 10 | — | 5 | — | 1 ² / ₃ | — | 1 ¹ / ₃ | 0/0 5 |
| 50 | 2 | 20 | 1 | 10 | — | 25 | — | 8 ¹ / ₃ | — | 2 | |
| 100 | 5 | — | 2 | 20 | 1 | 10 | — | 16 ² / ₃ | — | 4 | |
| 500 | 25 | — | 12 | 20 | 6 | 10 | 2 | 3 ¹ / ₃ | — | 20 ² / ₃ | |
| 1000 | 50 | — | 25 | — | 12 | 20 | 4 | 6 ² / ₃ | 1 | 1 ² / ₃ | |
| 10 | — | 22 | — | 11 | — | 5 ¹ / ₂ | — | 1 ³ / ₄ | — | 1 ¹ / ₂ | 0/0 5 1/2 |
| 50 | 2 | 30 | 1 | 15 | — | 27 | — | 9 | — | 2 ¹ / ₃ | |
| 100 | 5 | 20 | 2 | 30 | 1 | 15 | — | 18 ¹ / ₃ | — | 4 ² / ₃ | |
| 500 | 27 | 20 | 13 | 30 | 6 | 35 | 2 | 11 ² / ₃ | — | 23 | |
| 1000 | 55 | — | 27 | 20 | 13 | 30 | 4 | 23 ¹ / ₃ | 1 | 6 | |
| 10 | — | 24 | — | 12 | — | 6 | — | 2 | — | 1 ¹ / ₂ | 0/0 6 |
| 50 | 3 | — | 1 | 20 | — | 30 | — | 10 | — | 2 ¹ / ₂ | |
| 100 | 6 | — | 3 | — | 1 | 20 | — | 20 | — | 5 | |
| 500 | 30 | — | 15 | — | 7 | 20 | 2 | 20 | — | 25 | |
| 1000 | 60 | — | 30 | — | 15 | — | 5 | — | 1 | 10 | |

ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ

Ժամանակաշափ: Ժամացոյց:

Աստեղագիտութեան մէջ ամենէն կարեւոր պայմաններուն ու պահանջմունքներուն մէկը՝ ժամանակն ըստ ամենայն ճշդութեան չափելն ըլլալուն՝ իրեն համար անհրաժեշտ կարեւոր գործիքներուն մէկն է՝ Ժամանակաչափը կամ Ժամացոյցը: Բայց աս գործիքը՝ կամ ժամանակաչափը միայն բաւական չէ, հասարակ պէտք է կանոններ կամ միջոցներ գտնել՝ անիկայ հաստատելու, այսինքն անոր հաստատուն ու անսխալ ընթացք մը տալու եւ անիկայ շիտկելու կամ կարգաւորելու: Աստեղագիտութիւնն աս միջոցները բնութեան մէջ կը գտնէ: Բոլոր երկնից կամարին ըստ երեւութի շրջանը, կամ ճիշդ խօսելով՝ Երկրին՝ զինքն ամէն դիպց շրջապատող՝ երկնակամարին մէջ իր առանցքին բոլորաիքն ըրած շրջանը՝ ամենէն ապահով ժամանակաչափն է: Արդ աս շրջանը կ'ըլլայ 24 ժամու մէջ, որ եւ կը սահմանէ կամ կը կացուցանէ աստեղական օրը, որն որ աստեղական ժամերու, վայրկեաններու ու մանրերկրորդներու կը բաժնուի: Ասանց ամէնը մէկտեղ ընդհանուր անուամբ կ'ը-

առինն աստեղական ժամանակ՝ որն որ արե-
գահնային ժամանակէն զատ է, որ արեգա-
կան ըստ երեւութի շրջանին համեմատ
կ'երթայ ու կը հաշուի: — Աստեղագէտ
չըլլողներուն համար այսչափ միայն գիտ-
նալը բաւական է՝ որ աստեղական ժա-
մանակը, մէկ հաստատուն աստեղ մէկ
անգամ միջօրէական շրջանակին հասնե-
լուն մէջ անցած ժամանակը կամ տեւո-
ղութիւնն է, եւ ըստ այսմ աս աստե-
ղական ժամանակը հաստատուն ու ան-
փոփոխ ժամանակաչափ մը կ'որոշէ, ուս-
կից յայտնի կ'ըլլայ որ երկրի իր առանց-
քին բոլորտիքն ըրած շրջանը միշտ նոյն-
չափ ժամանակի մէջ կ'ըլլայ: Աս շրջա-
նին համեմատ ժամացոյց մը ամենայն
ճշդութեամբ կրնայ քննուիլ, կարգաւո-
րուիլ ու որոշուիլ: Թէ որ անոր ընթաց-
քը կամ քալուածքն՝ աստեղ մը մէկ
անգամ միջօրէական գծին հասնելէն
մինչեւ երկրորդ անգամ նոյնին հասնե-
լու վայրկենին հետ ճշդիւ նոյն կը մնայ,
այսինքն այն երկու անգամ հասնելուն
մէջ որոշակի ՉԿ ժամ միայն կ'անցնի,
ան ատեն այն ժամացոյցին քալուածքը
շիտակ է: Աս հաւասարութեան պատ-
ճառաւ աստեղագէտք հիմայ իրենց ժա-
մացոյցներն առհասարակ աստեղական
ժամանակին համաձայն կը շիտկեն, ու

րոնք եւ կ'ըսուին աստեղական խամացոյցք :
Քաղաքային կենաց համար ալ աստեղական
ժամանակը կրնար ապահով ժամանակաչափ
ըլլալ . բայց ասիկակ անոր համար չի գործածուիր՝ որ արեգակնային
ժամանակին հետ հաւասար չ'երթար .
արդ քաղաքային կենաց մէջ պէտք է արեգակնային
ընթացքին համաձայն ժամանակը սահմանել,
որովհետեւ անիկակ աչաց յայտնի կ'երեւայ,
ու Չ4 ժամ տեւողութիւն ունեցող աստեղագիտական
օրն երկու իրարմէ յայտնապէս տարբեր
մասերու՝ ցորեկուան ու գիշերուան կը բաժնէ :

V. յնչափ ժամանակի տեւողութիւնը,
որուն մէջ արեգակնային շրջանը կը կատարուի,
կ'ըսուի արեգակնային խամանակ : Թէ որ արեգակնային
երկնից նոյն որոշ կէտերուն վրայ մնար,
ինչպէս որ հաստատուն աստղները կը մնան,
ան ատեն պէտք էր որ իր ըստ երեւութի
շրջանին ժամանակն աստեղական
ժամանակին հետ ճիշդ համաձայն ու հաւասար
ըլլար, որով եւ անփոփոխ ու հաստատուն
ժամանակաչափ մը կը մատակարարէր . սակայն
արեգակնային աստեղական ժամանակին
Չ4 ժամ տեւողութեան միջոցին մէջ
մէկ աստիճանով դէպ արեւելք եւ կը մնայ : Աւտի թէ

որ ըստ պատահման հաստատունն աստեղ
մը հետ մի եւ նոյն ատեն՝ կամ վայրկե-
նի մէջ միջօրէական շրջանակին վրայ
գտնուի, սակայն այն հաստատունն աստղը
բոլոր երկնականարին հետ ՉԿ ժամու մէջ
երկրորդ անգամ նոյն միջօրէական գծին
հասած վայրկեանը՝ արեգակը դեռ մէկ
աստիճանով դէպ ի արեւելք ետ մնա-
ցած կ'ըլլայ. անոր համար պէտք է որ
բոլոր երկնականարը մէկ աստիճան յա-
ռաջ երթայ՝ մինչեւ որ արեգակն ալ
միջօրէական գծին հասնի. բայց աս
ըլլալու համար չորս ամբողջ վայրկեան
հարկաւոր է: Ասկից կ'իմացուի՝ որ արե-
գակնային օրը, կամ արեգական սկաւա-
ռակին միջին կէտին մէկ անգամ միջօ-
րէական շրջանակին հասնելէն մինչեւ
երկրորդ անգամ նոյնին հասնելուն ժա-
մանակը $\frac{1}{4}$ ամբողջ վայրկեանով աւելի եր-
կայն է՝ քան թէ աստեղական օրը: Արդ
թէ որ ուզուելու ըլլար աս աստեղական
օրուան համաձայն ժամացոյցները կար-
գաւորել ու շիտկել ու քաղաքային կե-
նաց մէջ ժամանակն անոր համաձայն չա-
փել, քիչ ատենուան մէջ շատ մեծ շփո-
թութիւն կը տեսնուէր: Ասան զի կէս-
օրը, որն որ բնականապէս արեգական
երկնի վրայ իր ամենաբարձր կէտը հասած
ատենին համեմատ կ'որոշուի, չէր կրնար

անսխմաբար մնալ. որովհետեւ աստեղա-
կան ժամանակին համեմատ կէսօրն ամէն
ամիս երկու ժամ աւելի յառաջ կ'ըլլար
քան թէ արեգական ընթացքին համե-
մատ երթալով : Ըստ այսմ վեց ամիսէն
ետքը աստեղական ժամանակին կէսօրն
ըստ ամենայնի այն վայրկենին կը հան-
դիպէր՝ որուն մէջ ըստ արեգակնային
ժամանակի կէս դիշեր է : Ասով ինչպի-
սի մեծ շփոթութիւն չէր պատճառեր :
Ասոր համար քաղաքային կենաց մէջ
ժամանակն ու ժամերը չափելու համար
արեգակնային ժամանակը սահմանուած է .
ըստ որոյ թէպէտ եւ մէկ արեգակնային
օրը 24 ժամ ու 4 վայրկեան երկայնու-
թիւն ունի, սակայն կըոր թուով միայն
24 ժամ կը տրուի անոր . ամէն մէկ ժամը
60 վայրկենի, ամէն մէկ վայրկեանը 60
մանրերկրորդի, եւ այլն, բաժնելով . եւ
սա ժամանակը կ'անուանի ճշմարիտ արե-
գակնային ժամանակ :

Եւ այց արեգական ըստ երեւութի
յառաջ երթալն ամէն օր միօրինակ չէ,
հապա աշնան ու ձմերուան մէջ աւելի
շուտ է՝ քան թէ գարնան ու ամարուան
մէջ, որովհետեւ ձմերուան մէջ արեգակն
երկրի աւելի մօտ է, ուստի եւ իր ձգո-
ղական զօրութիւնն աւելի կ'ազդէ եր-
կրի վրայ, որով եւ ասիական աւելի շու-

տով յառաջ կ'երթայ քան թէ ամա-
րուան մէջ: Ասկից ի զատ ուրիշ պարա-
զայ մըն ալ կայ, այսինքն արեգական
ըստ երեւութի շրջանն երկրի Հասարա-
կածին վրայ չէ, հապա նոյն հասարա-
կածը կտրող՝ կամ անոր վրայէն անցնող
շրջանակի մը վրայ, որ է Ծիւր Խաւարման
(Ճանապարհ երկրի), որն որ հասարա-
կածին հետ 23 աստիճան ու 28 վայրկեան
անկիւն մը կը կազմէ:

Արեմն արեգակնային օրերը մէկ
կէսօրէն միւս կէսօրը բոլոր տարւոյն մէջ
իրարու հետ հաւասար երկայնութիւն
չունին. ձմերուան մէջ քիչ մ'աւելի եր-
կայն են քան թէ ամարուան մէջ. արդ
թէ որ օրերուն երկայնութիւնը բոլոր
տարւոյն մէջ անհաւասար է, պէտք է որ
ժամերուն, վայրկեաններուն ու մանրեր-
կրորդներուն երկայնութիւնն ալ ան-
հաւասար ըլլայ, որովհետեւ ճշմարիտ
արեգակնային օրն՝ առանց իրեն այլ եւ
այլ երկայնութեան չափը նկատելու՝
պէտք է որ միշտ 24 ժամերու բաժնուի:
Ասկից կը հետեւի՝ որ չէ թէ միայն առ-
տեղական ժամանակը՝ հապա նաեւ ժա-
մացոյցներն ալ ոչ երբեք ճշմարիտ արե-
գակնային ժամանակին հետ ըստ ամե-
նայնի հաւասար ու համաձայն կրնան ըլ-
լալ: Ժամացուցի մը կարելի ու վերջին

կատարելու թիւնը յայնմ կը կայանայ՝ որ միշտ հաւասար կամ միօրինակ ընթացք ունենայ: Ասկից աւելի բան մը չի կրնար պահանջուիլ արուեստական գործիքէ մը, եւ հնար մը չկայ անոր անիւններն այնպիսի կարգով ու կազմութեամբ մը յօրինել՝ որ իր քալուածքին մէջ կամ իր քալուածքովն արեգակնային օրուան երկրննալուն ու կարճնալուն մէջ օրէ օր եղած փոփոխութիւնն ու այլեւայլութիւնը կարենայ յայտնի ընել, իբր թէ ըստ ամենայնի անոնց համաձայն ընթանալ: Ուստի ս'ի որ կ'ըսէ թէ իր ժամացոյցն ըստ ամենայն ճշգրութեան արեգական հետ կամ անոր համաձայն կ'երթայ՝ իր տգիտութիւնը կը ցուցրնէ: Յիրաւի արեգակնային ժամացոյցերը կրնան ու պէտք են այնպէս կազմուիլ ու կարգի գրուիլ՝ որ արեգական հետ ճշգիւ համաձայնին, բայց հոս ժամանակը չափողն անիւններուն կարգաւորութիւնն ու ընթացքը չէ, հապա նոյն իսկ արեգակը, ըստ որոյ պէտք է ժամերը ցուցրնող տախտակը յօրինել ու գծել, այսինքն անոր վրայ ժամերուն երկայնութիւնը արեգական ճշմարիտ ընթացքին համեմատ որոշելով ըստ այնմ տախտակին վրայ նշանակել, եւ միանգամայն բոլոր ժամացոյցը պատշաճաւոր գրիւք հաստատել:

Իսոյց սակայն արեգական ըստ երեւութի շրջանէն հաւասար ու միօրինակ ժամանակաչափ մ'ունենալու համար աստեղագէտք բուն կամ ճշմարիտ արեգակէն զատ սուտ կամ երեւակայեալ արեգակ մ'ալ հնարած են, որուն այնպիսի շարժում մը կու տան՝ ըստ որոյ ճշմարիտ արեգական հետ բոլոր տարւոյն մէջ հասարակածին վրայ հաւասար կամ միօրինակ ընթացքով յառաջ կ'երթայ, ու թէպէտ եւ ամէն օր իր ուղիղ վերելքն անվրէպ կը փոփոխէ, սակայն իր շրջանը ճշմարիտ արեգական հետ միատեղ կը ըմբոսնէ: Աս ասանկ ընելէն ի զատ՝ աստեղագէտք ճշմարիտ արեգակնային օրերուն անհաւասար երկայնութենէն չափ՝ այսինքն տեւողութիւն մը կ'որոշեն, որն որ ընդ հանրապէս թլիննէ ու բոլոր տարին մի եւ նոյն կը մնայ, եւ կ'ըսուի արեգակնային թլինն օր, կամ արեգակնային թլինն ժամանակ: Ըստ այսմ միջին կամ անփոփոխ՝ այսինքն միակերպ արեգակնային ժամանակի, ինչպէս աստեղագէտք կը դնեն, երեւակայեալ արեգակը մէկ անգամ միջօրէական գծին հասնելէն մինչեւ երկրորդ անգամ նոյնին հասնելու՝ կամ մէկ կէսօրէն մինչեւ միւս կէսօրը՝ մէկ ամբողջ աստեղական օրուան ու 3 վայրկենի, 56 մանրերկրորդի

ու 33 մանրերրորդի կը կարօտի, ուստի եւ արեգակնային միջին օրը 24 ժամ, 3 վ. 56 մանրերկրորդ ու 33 մանրերրորդ կը բովանդակէ. կամ՝ որ նոյն է՝ հաստատուն աստղերն երկնագունդին օրական շրջանին մէջ 3 վայրկենով, 56 մանրերկրորդով ու 33 մանրերրորդով յառաջագոյն միջօրական շրջանակին կը հասնին քան թէ երեւակայեալ արեգակը, եւ կամ այսպէս ըսենք. երկնագունդին օրական շրջանը կը կատարուի՝ միջին արեգակնային ժամանակին 23 ժամու եւ 56 վայրկենին ու իբր չորս մանրերկրորդին մէջ: Ըստ այսմ մէկ բոլոր տարւոյ մէջ երկնակամարը ամբողջ շրջան մը աւելի կ'ընէ՝ քան զոր արեգական ըստ երեւութի շրջաններուն թիւն է:

Աստեղագետի մը համար դիւրին քան մըն է՝ աստեղական ժամանակը կամ անոր ամէն մէկ մասերը միջին արեգակնային ժամանակի փոխել: Ինչու որ եթէ թուաբանական Երեքի կանոնին համեմատ՝ դրուելու ըլլայ՝ որ ըստ աստեղական ժամանակի 24 ժամը, 3 վ. 56 մանրերկր. ու 33 մանրերր. ըստ արեգակնային միջին ժամանակին 24 ժամերը կը բովանդակեն, ու փնտռուելու ըլլայ՝ թէ աստեղական ժամանակին մէկ ժամն արեգակնային միջին ժամանակին

քանի ժամին (կամ վայրկենին) հաւասար է, կ'իմացուի՝ թէ 59 վ. 50 մանրերկր. ու 10 մանրերրորդին հաւասար կ'ըլլայ : Եւ որովհետեւ մէկ վայրկեանը մէկ ժամին վաթսներորդ մասն է, ուրեմն 59 վ. 50 մանրերկր. ու 10 մանրերրորդին վաթսներորդ մասն ալ պէտք է որ արեգակնային միջին ժամանակն ըլլայ, որն որ աստեղական ժամանակին մէկ վայրկենին հաւասար է : Մէկ վայրկենին վաթսներորդ մասը մէկ մանրերկրորդ է, ուրեմն 59 վ. 50 մանրերկր. ու 10 մանրերրորդին վաթսներորդ մասը պիտ'որ ըլլայ 59 մանրերկրորդ ու 50 մանրերրորդ : Այս ամենայն հաշիւներու՝ կամ աստեղական ժամանակն արեգակնային միջին ժամանակի փոխելու համար աստեղագէտները մասնաւոր աղիւսակներ կամ տախտակներ յօրինած են . նոյն կերպով նաեւ թէ աստեղական ու թէ արեգակնային միջին ժամանակը հասարակածին աստիճաններուն փոխելու համար կրնան աղիւսակներ յօրինուիլ :

Աստեղագէտք երկնից վրայ ընելու դիտողութիւններնուն համար իրենց ժամացոյցերն ըստ մեծի մասին աստեղական ժամանակին, բայց նաեւ արեգակնային միջին ժամանակին համեմատ կը շիտկեն կամ կը կարգաւորեն . իսկ եր-

կինքի վրայ եղած երեւոյթները, զոր
օրինակ, արեգական ու լուսնոյ ելլելն ու
մտնելը, արեգական ու լուսնոյ խառա-
քումները, եւ այլն, ճշմարիտ արեգակ-
նային ժամանակին համեմատ կը հա-
շուեն, որն որ Երեքի կանոնին համաձայն
այն կերպով կ'ըլլայ՝ ինչպէս աստեղա-
կան ժամանակն արեգակնային միջին
ժամանակի դարձունելը: Քաղաքային
կենաց մէջ ժամացոյցներն արեգակնային
միջին ժամանակին համաձայն կը յար-
մարցուին, ու աստեղագէտներն ամէն
տեղ կը հոգան՝ ճշմարիտ ժամանակը մի-
ջին ժամանակի դարձունելու, որն որ հա-
մեմատութեամբ կամ հաւասարաչա-
փութեամբ ժամանակի կ'ըլլայ. եւ ա-
սիկայ կը սորվեցունէ՝ թէ ինչպէս ամէն
մէկ ճշմարիտ կէսօրուան համար՝ ասոր
ու միջին կէսօրուան մէջ եղած տարբե-
րութիւնը կրնայ գտնուիլ: Աս վախճանի
համար մասնաւոր աղիւտակներ կամ
տախտակներ կան, որոնք նոյն վախճա-
նին համար աստեղագէտները ծիշդ հա-
շուով կը յօրինեն ու ամէն մարդ կրնայ
առանց աշխատութեան գործածել: Երբ
որ մէկը շիտակ արեգակնային ժամացոյց
մ'ունի, անիկայ կը ցուցընէ իրեն ամէն
մէկ կէսօրուան համար ճշդիւ նոյն արե-
գակնային ժամացուցին ու որմի կամ

Ծոցի ժամացոյցներուն ընթացքին, այսինքն ճշմարիտ ու միջին արեգակնային ժամանակին մէջ եղած խտիրը: Թէպէտ եւ մէկ միջին ու մէկ ճշմարիտ արեգակնային օրուան մէջ եղած տարբերութիւնն երբեք 30 մանրերկրորդէն շատ աւելի չհկրնար ըլլալ, ու տարւոյն մէջ շատ օրեր եւ ոչ այսչափի կը հասնի, ի վերայ այսր ամենայնի այս փոքր տարբերութիւնները՝ կամ ամէն մէկ օրուան մէկ քանի մանրերկրորդները քանի մը ամսուան մէջ այնչափ կը շատնան՝ որ մինչեւ 15 ու ալ աւելի վայրկեանի կը հասնին: Ի՛նչպէս, ճշմարիտ ու միջին կէսօրուան մէջ եղած տարբերութիւնը Փետրուար ամսոյն 11ին՝ 15 վայրկեան է, իսկ Նոյեմբերի 2ին՝ 16 վայրկեան. ուստի եւ Փետրուարի 11ին ճշմարիտ կէսօրը 15 վայրկեան աւելի երկայն է. իսկ Նոյեմբերի 2ին՝ 16 վայրկեան աւելի կարճ է. կամ՝ որ նոյն է՝ միջին ժամանակի համեմատ կարգաւորած որմի կամ Ծոցի ժամացոյց մը՝ Փետրուարի 11ին պէտք է որ 12 ժամ, 15 վայրկեան ցուցրնէ՝ երբ որ արեգակը միջօրական (կէսօրուան) շրջանակին կը հասնի, այսինքն երբ որ ճշմարիտ կէսօր կ'ըլլայ. իսկ Նոյեմբերի 2ին պէտք է որ նոյնպիսի ժամացոյց մը 11 ժամ ու 44 վայրկեան ցուցրնէ, երբ

որ արեգակն արդէն միջօրական շրջանակին հասած է, ուստի եւ արեգակնային ժամացոյցը 12 ժամ (կէսօր) կը ցուցնէ: Տարւոյն մէջ չորս անգամ (օր) միայն, այսինքն՝ Ապրիլի 15ին, Յունիսի 15ին, Օգոստոսի 31ին ու Դեկտեմբերի 24ին՝ ճշմարիտ կէսօրուան ու միջին կէսօրուան մէջ եղած տարբերութիւնը = 0 է. որ բնել է՝ թէ աս օրերու մէջ թէ՛ ճշմարիտ արեգակն ու թէ՛ երեւակայեալ արեգակը մի եւ նոյն վայրկենի մէջ իրենց բարձրութեան ամենէն վերին աստիճանը կը հասնին՝ կամ միջօրական շրջանակէն կ'անցնին. ուստի եւ ճշմարիտ կէսօրն ու միջին կէսօրը մի եւ նոյն ժամանակակետի կամ վայրկենի մէջ կը հանդիպին. անոր համար շիտակ ու աղէկ որմի ու արեգակնային ժամացոյցերն աս չորս օրերը մի եւ նոյն վայրկենի մէջ 12 ժամ (կէսօր) կը ցուցնեն:

Յաջորդ աղիւսակին մէջ կը տեսնուի՝ թէ բոլոր տարւոյն մէջ՝ 10 օրէն 10 օր հաշուելով՝ միջին ժամանակին ու ճշմարիտ ժամանակին մէջ բլտղ ճիշդ տարբերութիւնը քանի վայրկեան է, կամ թէ՛ երբ որ արեգակը միջօրական շրջանակին կը հասնի ու արեգակնային ժամացոյցը 12 ժամ (կէսօր) կը ցուցնէ՝ նոյն ատենն որմի կամ ծոցի ժա-

մայրոց մը քանի ժամ ու վայրկեան
պիտ'որ ցուցրնէ :

| Յունուար | 1. | 12 | ժամ, | 4 | վայրկեան. |
|-----------|-----|----|------|----|-----------|
| " | 11. | 12 | " | 8 | " |
| " | 21. | 12 | " | 12 | " |
| " | 31. | 12 | " | 14 | " |
| Փետրուար | 10. | 12 | " | 15 | " |
| " | 20. | 12 | " | 14 | " |
| Մարտ | 2. | 12 | " | 12 | " |
| " | 12. | 12 | " | 10 | " |
| " | 22. | 12 | " | 7 | " |
| Ապրիլ | 1. | 12 | " | 4 | " |
| " | 11. | 12 | " | 1 | " |
| " | 21. | 11 | " | 58 | " |
| Մայիս | 1. | 11 | " | 57 | " |
| " | 11. | 11 | " | 56 | " |
| " | 21. | 11 | " | 56 | " |
| " | 31. | 11 | " | 57 | " |
| Յունիս | 10. | 11 | " | 59 | " |
| " | 20. | 11 | " | 1 | " |
| " | 30. | 12 | " | 3 | " |
| Յուլիս | 10. | 12 | " | 4 | " |
| " | 20. | 12 | " | 6 | " |
| " | 30. | 12 | " | 6 | " |
| Օգոստոս | 9. | 12 | " | 5 | " |
| " | 19. | 12 | " | 3 | " |
| " | 29. | 12 | " | 1 | " |
| Սեպտեմբեր | 8. | 11 | " | 58 | " |
| " | 18. | 11 | " | 54 | " |
| " | 28. | 11 | " | 51 | " |
| Հոկտեմբեր | 8. | 11 | " | 48 | " |
| " | 18. | 11 | " | 45 | " |
| " | 28. | 11 | " | 44 | " |

| | | | | | |
|-----------|-----|----|------|----|------------|
| Նոյեմբեր | 7. | 11 | ժամ, | 44 | վայրկեան . |
| " | 17. | 11 | " | 45 | " |
| " | 27. | 11 | " | 48 | " |
| Դեկտեմբեր | 7. | 11 | " | 52 | " |
| " | 17. | 11 | " | 57 | " |
| " | 27. | 12 | " | 2 | " |

Աստուծոյ առջամտեալ շատ օգտակար ու կարեւոր է այն ամէն անձանց համար, որոնք աստեղագիտութեան տեղեակ շըլալով՝ ճշմարիտ ժամանակը միջին ժամանակի չեն կրնար իրենցմէ ըստ ուղիղ հաշուի դարձունել. ու առանց այսպիսի աղիւսակի կամ հաշուի հնար չէ հասարակ ժամացոյցերը շիտկել կամ կարգաւորել, մանաւանդ որ արեգակնային ժամացոյցը չիկրնար ամէն ատեն իր գործքը կատարել, ինչպէս յայտնի է:



Բ Ն Ա Ք Ի Տ Ա Կ Ա Ն

Օգերեւոյթներ: Հողմ: Տարւոյն
եղանակները:

Տոմարներու մէջ լուսնոյ քառօրդ-
ներուն փոփոխութեան, ինչպէս նաեւ
չորից եղանակաց այլ եւ այլ ամիսնե-
րուն համեմատ օդին այլ եւ այլ ապա-
գայ հանգամանաց վրայ գուշակութիւն-
ներ կը դրուին. ու ցուրտ, խոնաւ եւ ան-
ձրեւային, չոր, պարզ, պայծառ ու հան-
դարտ, եւ խառնակ, հողմային ու մրրո-
կաբեր օդ ունեցող կամ ունենալու օ-
րերը ճշգութեամբ մը կը նշանակուին:
Ասանք գրեթէ բոլոր անհաստատ ու կար-
ծիքական խօսքեր ու գուշակութիւններ
են, որոնց վրայ ոչ ապահովութիւն ու
ոչ հաստատուն ու որոշ հմտութիւն մը
կրնայ ունեցուիլ, ինչպէս հազարաւոր
փորձերը ցուցրցած են: Ասան զի օդին
վրայ այլ եւ այլ պատճառներու ազդե-
ցութիւնները կերպ կերպ պատահական
փոփոխութիւններ կը պատճառեն ու ի-
րարմէ տարբեր օդային երեւոյթներ յա-
ռաջ կը բերեն, զորոնք յառաջագոյն
(մանաւանդ ամիսներով յառաջ) ճշգու-
թեամբ գուշակելն ու նշանակելը կարելի
չէ: Աս ասանկ ըլլալով՝ տարակոյս չի-

վերջընէր՝ որ ասանկ երեւոյթներուն ճիշդ
հանգամանաց ու պատճառաց, ինչպէս
նաեւ երկրի այլ եւ այլ մասերուն ու կող-
մերուն օդին ու եղանակին (տարւոյն չորս
եղանակներուն համեմատ) այլեւայլու-
թեան ու անոր պատճառաց վրայ քանի
մը հիմնական տեղեկութիւններ ստա-
նալը մեր ընթերցողաց աւելի օգտակար
ուստի եւ ցանկալի բան մըն է: —

Արկրի երեսը չէ թէ միայն հողէն
ու ջրէն բաղկացեալ մարմին մըն է, հա-
պա գրեթէ անտեսանելի բայց անոր վրայ
մեծ ազդեցութիւն ունեցող օդային
ծածկութենէ մը շրջապատած է, զորն
որ օդեղէն շրջանակ կամ մթնոլորտ կ'ա-
նուանենք, որուն եւ գլխաւոր բաղադրիչ
մասն ամէն տաք արիւն ունեցող կեն-
դանիներուն կենաց, ինչպէս նաեւ կրա-
կինս վառուելուն ու պահպանուելուն ան-
հրաժեշտ հարկաւոր է: Աս օդն երկրի
երեսէն որչափ աւելի վեր ու բարձրացած
է, այնչափ աւելինուրբ (բարակ) ու ցուրտ
կ'ըլլայ, մինչեւ սահմանաւոր կամ որո-
շեալ բարձրութեան մը մէջ երկրաբնակ
կենդանեաց համար շնչելու անյարմար
է, այնպէս որ 20,000 ոտնաչափէն աւելի
բարձր ըլլող լեռան մը կատարը մարդ-
չիկրնար շնչել ուստի եւ ապրիլ:


Արկրի մարմինէն ու առ հասարակ

երկրի վրայ ըլլող գրեթէ ամէն մարմին-
ներէն անդադար շոգիք կամ գոլորշիք
գէպ ի վեր կ'ելլեն, մթնոլորտին մէջ կը
բարձրանան կը ժողվին ու այլ եւ այլ
տեսակ օդային երեւոյթներ կամ օդե-
րե-ոյճներ կը պատճառեն, զորոնք բնա-
խօսներն առհասարակ երեք տեսակի կը
բաժնեն, ջրային, լուսա-ուր կամ փայլող
ու հրային: Ասանկ օդերեւոյթներ են՝
ցօղ, ձեփ, մայ, անյրե-, կարկուտ, թիաթան,
մրրիկ, սլացեալ աստղ, հրաբնդակ, հե-սիս-
այփ, եւ այլն: — Յօղը ջրային շոգիներ-
էն կը գոյանայ կամ կը պատճառի, ո-
րոնք ցորեկն երկրէն վեր կ'ելլեն, գի-
շերուան ցրտութեամբ կը խտանան ու
նորէն վար կ'իջնան (ջրի կաթիլներու
գառնալով): Թէ որ գիշերները շատ տաք
կ'ըլլան, ան ատեն կամ ամենեւին ցօղ
չ'ըլլար, կամ խիստ քիչ կ'ըլլայ: — Սա-
ւած ցօղն եղեւածն կ'ըսուի, որն որ կ'ըլ-
լայ՝ երբ որ գիշերներն աւելի ցուրտ կ'ըլ-
լան: — Մէփը նոյնպէս խտացած շոգի-
ներէն կը կերպաւորի, որոնք եւ յատ-
կապէս հասարակ շոգի չեն կրնար սե-
պուիլ: Զուրն՝ ուսկից մէզը գոյացած
կամ բաղադրած է՝ շատ մանր ու նուրբ
մասունքներու բաժնուած է, անոր հա-
մար օդին մէջ կը լողայ կամ կը շարժի. աս
նուրբ մասունքն իրարու հետ կապակցե-

լու ըլլան՝ պզտիկ պզտիկ կաթիլներ կը
կազմեն, որոնք կամաց կամաց վար կ'իջ-
նան, որով երկրին երեսը մէզով կը ծած-
կուի եւ օդը *Տառախլապարկ* կ'ըսուի: Մէ-
զէն ետքն անմիջապէս արեւ ծագելու
ըլլայ՝ առ օդին մէջ լողացող ջուրն անոր
ջերմութեամբը կ'անգայտանայ կ'անու-
րանայ կը ծաւալի, ուստի եւ գոլորշի
դառնալով երկրին երեսը ծածկող մէզը
պէտք է որ դէպ ի վեր ելլէ: —

Աս վեր ելող մէզէն *ածուկ* կը
գոյանան, որոնց այլ եւ այլ գոյներ ու-
նենալն արեգական լուսնին այլ եւ այլ
դիաց կամ այլ եւ այլ կերպով անոնց
վրայ զարնելէն կը պատճառի: — Մէ-
զին նուրբ մասերէն օդին վերի կողմերը
կամ գաւառներն *անձրեւ* կը գոյանայ
կամ կը պատճառի. որն որ կամ *տեղա-*
հան է, այսինքն կտոր մը տեղւոյ վրայ
կ'իջնայ ու շուտով կը դադրի, կամ *ընդ-*
հանուր, որն որ շատ տեղ տարածած
է ու երկայն կը քշէ, կամ *փոշեման*, որն
որ մէզի պէս կաթիլ չձեւացած անձայն
կ'իջնայ, ու կամ *տեղապարակ* (*ապա-*
նակ), որն որ նաեւ թփփուկէ կամ թփն ու
լողք կ'ըսուի, ու հասարակօրէն ամպրո-
պի հետ կ'ըլլայ, եւ ասիկայ կը պատա-
հի՝ երբ որ սաստիկ հողմ փչած կամ
փոթորիկ ելած ատենը՝ ամպ մը յան-

կարծակի կը խտանայ ու կը թանձրանայ, եւ ան ատեն կամ արտաքոյ կարգի մեծ կաթիլներով անձրեւ կու գայ, եւ կամ ջուրը վերէն հեղեղի պէս երկրի վրայ կ'իջնայ: — Կարկոտք սառած անձրեւ է, որուն գոյանալուն կերպին վրայ դեռ բնախօսները հաստատութեամբ բան մը չեն որոշած: (Տէս Բնագիտութիւն, էջ 423 եւ 544: — Ծիածանը կամ Ծիրանի գօտին կը կազմուի՝ կամ անձրեւի կաթիլներուն վրայ կը տեսնուի՝ երբ որ արեգակը սեւ կամ թանձր ամպի մը գէմ կը կենայ ու մենք արեւուն ու ամպին մէջ տեղը կը գտնուինք: (Ասոր վրայ ալ տես նոյն գրքին 343—345 էջերը: — Չիանն ուրիշ բան չէ, բայց եթէ մանր մանր ու սառած ջրի մասունք, որոնք հողմ չեղած ատենը վեցկողմեան կամ վեց ճառագայթներով աստղի նման ձեւով գետին կ'իյնան, երբեմն ասոնցմէ մէկ քանին օդի մէջ իրարու կպած ձեան գնդակ կ'ըլլան ու անանկ կ'իյնան: Չեան այլ եւ այլ ձեւերն առաջիկայ Պատկերին մէջ կը տեսնուին:



Փոխորէի կամ հրբէի հողմոյ կ'ըսուի
օդոյն ան սաստիկ շփոթութիւնը կամ
տակնուվրայութիւնն՝ որն որ կը պատ-
ճառի՝ երբ որ ելեկտրական նիւթով
լցուած մթնոլորտը՝ կամ աւելի որոշ
ըսենք՝ ամպերն իրենց ելեկտրական հա-
ւասարակչութիւնն իրարու կամ եր-
կրադնդին նկատմամբ կը կորսունցընեն

ու իրենց ելեկարականութիւնը՝ որոտման
հետ ընկերացած կայծակով մը դուրս
կը պարպեն : Սաստիկ փոթորիկները սոս-
կալի մնասներ կ'ընեն ու երբեմն փոթոր-
կի ատեն ուրիշ երեւոյթ մ'ալ կը պա-
տասի, այսինքն սաստիկ հովեր օդին
վերի կողմերն իրարու հակառակ փշե-
լով՝ մեծ պտոյտներ կ'ընեն ու անկից կը
պատճառի Ռաֆայէ կամ վիշապ ըսուած
զարհուրելի օդային երեւոյթը . այսինքն
վերէն ամպի մը ծայրը պտոյտ ընելով
վար կիջնայ ծովի կամ ցամաքի վրայ ու
գտածը՝ ջուրը կամ հողը ու երբեմն ա-
նոնց վրայ եղածները (նաւակները, ծա-
ռերը) վեր կը քաշէ, ամպէ ու ջրէ կամ
հողէ երկու մեծ ձագառներ (խոռնի),
յատկապէս կոներ (շաքարի գլխոյ կամ
կաղապարի նման) իրար կը քաշեն՝ ի-
րարու հետ կը միանան, վերի մասը վա-
րինը հարիւրաւոր ոտնաչափ կը բարձրա-
ցընէ վեր կը հանէ : (Տէս Տոմար ընդանե-
կան 1858. էջ 67—70 :)

Թասիաթահան լոյս կամ Մուլի հոս-
ըսուած երեւոյթը պզտիկ պզտիկ բոցեր
կամ լոյսեր են, որոնք կեցած ու տղմատ
ջրերու, գերեզմաննոցներու եւ փտտած
մարմիններ գտնուած տեղերու վրայ
գեանի մօտ կը տեսնուին, ցաթկելով
ասդին անդին կը շարժին ու քիչ ատե-

նէն աներեւոյթ կ'ըլլան: Հասարակօրէն
կը կարծուի՝ որ ասոնք այրելի գոլորշի-
ներէն կը պատճառին, որոնք իրենցմէ կը
վառին ու վառած ատեննին լոյս կու
տան. ուրիշ կարծիք մ'ալ կը դնէ՝ թէ
ասոնք ջրածին կազին լուսակիր մասերն
են, որոնք չէ թէ կը վառին հապա միայն
լոյս կ'արձրկեն: Աս թափառական լոյ-
սերուն վրայ ռամկաց խօսքերը տգիտա-
կան առատպելներ են: —

Աւացեալ աստղ ու Հրագնագիտութեամբ
երեւոյթներն ալ գրեթէ թափառական
լոյսին նման պատճառէ յառաջ կու գան.
ասոնք զանգուածներ են՝ որոնք արեգա-
կան բոլորակքը պարտելով երկրագնդին
ձգողական զօրութեան սահմանին մէջ
մտած ատեննին՝ վար կը քաշուին ու
երկրի վրայ կ'իյնան: Աւացեալ աստղնե-
րը հասարակօրէն Ապրիլ, Օգոստոս ու
Նոյեմբեր ամիսներուն մէջ յաճախ կը
տեսնուին, երբեմն մէկ, երկու հատ,
երբեմն ալ բազմութեամբ գէպ ի վար
կը ոլանան: Հրագնակներն օդին մէջ
որոտալով կը ճաթին ու կտոր կտոր ըլ-
լալով քարի նման վար կ'իյնան, երկրի
մէջ կը թաղուին, գլխաւոր մասերնին
երկաթ է վրանին փայլուն կուպրի (դիֆրէ)
նման կեղեւ ունին, ու կ'ըսուին օգտաւոր:
Էրեւանի մէջ կէս գիշերուան մօտ

երկնից վրայ երեւցող լոյս մըն է, ուսկից երբեմն ճառագայթներ դուրս կ'ելլեն, ու կամաց կամաց երկնից մեծ մասին վրայ կը տարածի, որով երկինքը բոլորովին կարմիր ու հրագոյն կ'երեւայ: Աս երեւոյթներկնից հիւսիսային կողմերը յաճախ երեւնալուն Հիւսիսայե՛ք բսուեցաւ, բայց հարաւային կողմերն ալ կ'երեւայ ու ան ատեն կ'ըսուի Հարաւայե՛ք. բայց երկուքն ալ նաեւ Բեւեռային լոյս կամ Բեւեռայն լոյս կ'ըսուին: Ասոնց պատճառը ելեկտրականութիւնը կը համարուի: (Տե՛ս Տոմար ընթաց. Գ. Տարի էջ 105—107:)

() Դե՛ն ինչպէս ծովը՝ ամենեւին հանդարտ ու հանգիստ չիմնար, ինչպէս ծովու մէջ՝ նոյնպէս օդին կամ մթնոլորտին մէջ ալ հոսանքներ կան, որոնք միայն մթնոլորտին այլ եւ այլ մասերուն հաւասարակշռութիւնը պահելու եւ շփոթած ատենը տեղը բերելու կը ծառայեն: Բոլոր օդին այսպիսի շարժմունքը Հող՝ կ'ըսուի: Հողմերուն ելլելուն գլխաւոր պատճառը՝ մթնոլորտին այլ եւ այլ մասանց ջերմութեան չափին ու հանգամանաց փոփոխութիւնն է. երբ որ մթնոլորտին մէկ մասին մէջ ջերմութիւնը կ'աւելնայ, հոն բլլող օդը կ'անուարանայ կը բարակնայ ուստի եւ աւելի թեթեւ կ'ըլլայ ու պէտք է որ՝ որովհետեւ իրեն

սահմանակից բլլող օդին միւս մասերն
իրենց խառնութիւնն ու ձկառմը կը պա-
հեն, դէպ ի վեր ելլէ: Աս ասանկ եղա-
ծին պէս՝ այն քովը կամ սահմանակից
բլլող օդին զանգուածները նոյն բարակ-
ցած օդին ետեւէն կը հոսեն կամ դիմեն
պարապ մնալու սկսող տեղը բռնելու եւ
լեցընելու համար. ստով կը պատճառի
օդին շարժումն որ է հողմը: Արչափ որ
աս այլ եւ այլ մասանց իրարու ետեւէ
դիմելն ու յաջորդելը շուտով ու սաստ-
կութեամբ կ'ըլլայ, հողմն ալ այնչափ
աւելի զօրաւոր կը փչէ: Հողմին պատ-
ճառք մթնոլորտին այլ եւ այլ մասանց
տաքութեան անհաւասարութիւնն ըլ-
լալը յայանի կը ցուցընէ ծովու հողմը.
որն որ արեւուն ծագելէն քանի մը ժամ
ետքը ծովէն դէպ ի ցամաք կը փչէ. ո-
րովհետեւ ցամաք երկիրն արեւուն ու-
ժովը ծովէն աւելի տաքնալով՝ անոր
վրայի օդը կ'անօորանայ կը թեթեւնայ ու
կը սկսի վերէն դէպ ի ծովը հոսիլ, իսկ
վարէն ծովուն վրայի օդը դէպ ի ցամաք
կը դիմէ, որ եւ կամաց կամաց կը սաստ-
կանայ: Քայց արեւը մառը մտնելուն պէս
ցամաք երկիրը ծովէն աւելի շուտով պա-
ղելուն՝ բարակ հով մը ցամաքէն դէպ ի
ծովը կը փչէ, իսկ օդին վերի կողմերը՝
ինչպէս փորձով տեսնուած է՝ ասոր հա-

կառակ հոսանք կամ հողմ կ'ըլլայ: Աս
բանս ուրիշ ատեն ալ կը հանդիպի, այս
ինքն օգին վարի դիւրը հով մը փշած
ատենը վերի դիւրն անոր հակառակ ուղ-
ղութեամբ հով մը կը փշէ, որն որ ամպե-
րուն ընթացքէն կը տեսնուի: Ասկից կը
հետեւի՝ որ մի եւ նոյն ժամանակ հող-
մերն այլ եւ այլ բարձրութեան մէջ այլ
եւ այլ ուղղութիւն կ'ունենան. աս բա-
նիս մէջ երբեմն բարձր լեռներն ալ ազ-
դեցութիւն կ'ունենան: Հովերուն մի եւ
նոյն ուղղութենէ կամ ընթացքէն ու-
րիշ ընթացքի դառնալուն մէջ ալ՝ ըստ
բնագիտաց՝ կարգ մը կայ:

Հողմերն՝ երկնից այլ եւ այլ կողմե-
րուն համեմատ՝ որոնցմէ կը փշեն՝ այլ
եւ այլ անուններ կ'ունենան, հի-սիսային,
հարա-ային, արե-ելլան, արե-մարեան, հի-
սիսային - արե-մարեան, հարա-ային - արե-
մարեան, հի-սիսային-արե-ելլան, հարա-ային-
արե-ելլան, եւ այլն: Իսկ իրենց տեւո-
ղութեան նկատմամբ հովերը կը բաժ-
նուին հասարակածն կամ հանոնա-որ եւ
կամ արեւիան, շրջանա-որ, ու փոփոխական
կամ անհանոն հովեր: Կանոնա-որ հողմը
հասարակածին կամ այրեցեալ գօտեոյն
տակ կամ սահմանին մէջ միշտ փչող
հով մըն է, որն որ մինչեւ 30 աստիճան
լայնութեան կ'երթայ, ու Ազլանդեան

Ժողովուն վրայ հասարակածին հիւսիսային
կողմը հիւսիսային-արեւելեան ընթացք
ունի. եւ քանի որ հասարակածին կը մօ-
տենայ՝ բոլորովին արեւելեան հողմ կ'ըլ-
լայ, իսկ հասարակածին հարաւային դին
հարաւային-արեւելեան ընթացք ունի
եւ նոյնպէս քանի որ հասարակածը կը
մօտենայ՝ բոլորովին արեւելեանի կը դառ-
նայ: Երջանաւոր հողմեր են հնդկային
Ժողովուն կամ Հնդկաց ովկիանոսին վրայ
վեց ամիսէ վեց ամիս իրենց ուղղութիւնը
հակառակի փոխող հողմերը. ասոնք ա-
ռանձիննն նոյն Ժովին վրայ հիւսիսային
լայնութեան մէջ Հոկտեմբերէն մինչեւ
Մարտ հիւսիսային-արեւելեան կողմէն՝
իսկ Ապրիլէն մինչեւ Սեպտեմբեր հա-
րաւային արեւմտեան կողմէն կը փչեն,
իսկ հարաւային լայնութեան մէջ մեր
ամարուան ատենները կամ վեց ամիսը
հարաւային-արեւելեան կողմէն, իսկ մեր
ձմերուան վեց ամիսը հիւսիսային-արեւ-
մտեան կողմէն կը փչեն: Ուրիշ տեսակ
մը շրջանաւոր հողմ են՝ օրրասօրական
կամ ամէնօրուան ցամաքային ու ծովային
հովերը. որոնք տապախառն գօտիներուն
մէջ միշտ՝ իսկ բարեխառն գօտիներու
մէջ ամարուան յստակ օրերը՝ կէսօրուրնէ
եաքք ծովէն դէպ ի եզերքն՝ իսկ կէսօրէն
առաջ կամ առտուան՝ ցամաքէն դէպ ի

ծով կը փչեն, բայց ոչ երբեք ծովու կամ ցամաքի վրայ դէպ ի մէջերն յառաջ կ'երթան: Աս կանոնաւոր ու շրջանաւոր հողմերուն սահմաններէն դուրս է փոփոխական կամ անկանոն հողմերու սահմանը, որոնք անորոշ ժամանակի մէջ մէյ մը մէկ դիաց մէյ մը մէկալ դիաց կը փչեն, երբեմն յստակ օդ, երբեմն անձրեւ, երբեմն ցրտութիւն ու երբեմն բարեխառնութիւն կամ ջերմութիւն կը պատճառեն: —

Մթնոլորտին տեղական հանգամանաց հետ անձուկ կապակցութիւն ունին ընդհանուր երկրի քնական օդաբաժինները կամ այլ եւ այլ երկիրներու օդին ու եղանակին հանգամանքը: Թէպէտ եւ բնական օդաբաժինները (կլիմաները) կամ եղանակները աստեղագիտական օդաբաժիններուն (երկու աստ կամ այրեցեալ, երկու բարեխառն ու երկու ցրտային գօտիներուն) համեմատ բաժնուած են, բայց բնական օդաբաժինը շատ տեղ աստեղագիտականէն շատ տարբեր կ'ըլլայ, միայն այրեցեալ գօտիներուն տակ գրեթէ բոլորովին անոր համաձայն է: Իսկ մէկալ՝ մանաւանդ բարեխառն գօտիներուն տակ՝ եղանակը շատ ու մեծ այլեւայլութիւններ կ'ունենայ, որուն գլխաւոր պատճառներն են՝ երկրի մը ծովու մեր-

ձառորութիւնն, իր ներսերուն դիրքը, լեռները, բուն գետնին ու դրացի գետիններուն մշակութիւնը ու հողին բնական հանգամանքը: Ծովեզերեայ երկիրները, աւելի եւս կղզիները՝ միջերկրեայ ատերէն կամ երկրի ներսերէն աւելի բարեխառն եղանակ ունին մի եւ նոյն աշխարհագրական լայնութեան տակ, որովհետեւ ծովը միակերպ բարեխառնութիւն կամ եղանակ կը պահէ ու նոյնը մտակայ երկիրներուն ալ կը հաղորդէ: Իսկ լեռնային ու բարձր դիրք ունեցող երկիրներուն իրենց հետ հաւասար լայնութեան տակ ըլլող երկիրներէն աւելի ցուրտ եղանակ ունենալուն պատճառն ան է՝ որ օդն որչափ աւելի տափարակ երկիրէն հեռու է՝ այնչափ աւելի բարակ, չոր ու սափ եւ ցուրտ կ'ըլլայ: Մշակուած երկիրները չմշակուածներէն աւելի բարեխառն եղանակ ունին, թէպէտ եւ երկուքն ալ հաւասար լայնութեան աստիճան ունենան: Ինչու որ մշակութեան յարմար՝ բայց չմշակուած երկրի մը վրայ, մանաւանդ թէ որ ճախնային ու անտառային է, արեգական ջերմացուցիչ ճառագայթները չեն կրնար իրենց ազդեցութիւնն ընել. իսկ ասոր հակառակ մշակուած գետինն արեւուն ջերմութիւնն ազատ կ'ընդունի եւ իր օդն ալ

աւելի առողջ կ'ըլլայ : Բայց աս ալ պէտք է գիտնալ՝ որ անտառները պակասեցրնելն ալ կարգով ու չափով պիտ'որ ըլլայ , ու զանոնք բոլորովին ջնջել վերցուէն ալ փնասակար հետեւութիւն կ'ունենայ . որովհետեւ շիտակ դաշտերու վրայ ըլլող ծառերը ջրային շոգիքն օդէն իրենց կը քաշեն , ուստի թէ որ ամէն ծառերն արմատախիլ ըլլան , գետինը բեղմնաւորիչ անձրեւներէն կը զրկուի , ուստի եւ կամաց կամաց չորութեան փայտները կը տեսնէ : Գետնի մը բնական հանդամանաց անոր եղանակին կամ օդաբաժնին վրայ ազդեցութիւն ընելն ասով ալ յայտնի կ'ըլլայ՝ որ (զոր օրինակ) ճախճախուտ ու թաց գետնէն վեր ելլող շոգիքն օդը կը պաղեցրնեն , իսկ ընդ հակառակն աւազուտ կամ չոր գետնէ մը վեր ելլող շոգիքը օդը կը տաքցրնեն : —

Բնդհանրապէս խօսելով թէ հին ու թէ նոր աշխարհին արեւելեան երկիրներն աւելի ցուրտ են՝ քան թէ հաւասար լայնութեան աստիճաններու տակ ըլլող արեւմտեան երկիրները : Ի վերայ այսր ամենայնի Ամերիկայի եղանակը հաւասար լայնութեան աստիճաններու տակ հին աշխարհին եղանակէն աւելի ցուրտ է . ասոր պատճառ կրնան սեպուիլ հիւսիսային Ամերիկայի բազմաթիւ մեծ լճերն

ու անտառները, որոնք մեծագոյն ջերմութեան բանելուն ու տարածուելուն ընդհանրապէս արգելք կ'ըլլան:

Տարւոյն (չորս) եղանակներուն բնական հանգամանացը վրայ գիտնալու հարկաւոր բանն աս է՝ որ միայն բարեխառն գօտիներուն տակ ըլլող երկիրները չորս, իսկ տաք կամ այրեցեալ ու ցրտային գօտիներուն տակ ըլլողները միայն երկուեղանակ ունին: Առջիններն ունին գարուն, ամառ, աշուն ու ձմեռ. բայց որչափ որ դէպ ի բեւեռային շրջանակները յառաջ կ'երթըցուի, գարունն ու աշունն ալ այնչափ աւելի անզգալի կ'ըլլան. ամառը քիչ մ'երկայն տեւողութիւն կ'ունենայ, իսկ ձմեռը շատ երկայն կ'ըլլայ: Բայց ան տեղերն՝ ուր որ գարուն չ'ըլլար կամ չ'որոշուիր՝ ջերմութիւնն աւելի շուտով կը բարձրանայ կամ կ'աւելնայ. ինչու որ աս տեղերու վրայ արեգակը թէպէտ եւ միջօրական շրջանակէն շատ աւելի վեր չիբարձրանար, բայց աւելի երկայն ժամանակ հորիզոնէն վեր կը մնայ: Ասոր համար ալ նոյն երկիրներու մէջ արմառիք (ցորեն, գարի, եւ այլն,) յառաջ կու գան. որոնք ուրիշ տեղերէն աւելի ուշ կը ցանուին ու շուտ կը հնձուին: Տաք կամ այրեցեալ գօտիներուն տակ ըլլող երկիրներն ալ միայն

երկու եղանակ ունին, բայց բեւեռական
կամ ցրտային երկիրներուն բոլորովին
հակառակ հանդամանօք: Աս այրեցեալ
գօտիներուն տակ չի ու թաց կամ ան-
չիւ-ային եղանակներն՝ այսինքն իրենց
ամառն ու ձմեռն՝ անմիջապէս իրարու
կը յաջորդեն. աս տեղերը յատուկ ձմեռ
չկայ, անձրեւներու ժամանակն իրենց
ձմեռն է: Այրեցեալ գօտւոյն ասդիի
(հիւսիսային) երկիրներուն անձրեւային
ժամանակը գարնան ու աշնան գիշերա-
հաւասարին մէջ՝ ուստի եւ մեր ամա-
ռան ամիսներուն մէջ կ'իյնայ. աս ա-
տեններն երկինք բոտ մեծի մասին ամ-
պերով ծածկած կ'ըլլայ ու յաճախ տե-
ղատարափներ կ'իջնան: (Բայց Արուսի-
տնին վէպին մէջ գրուածին պէս՝ գիշեր
ու ցորեկ անդադար չ'անձրեւեր, ապա
թէ ոչ երկրորդ ջրհեղեղ մը կ'ըլլար,
մանաւանդ որ այն անձրեւային ժամա-
նակն երեք մինչեւ հինգ ամիս կը քշէ):
Այս անձրեւներու ատեն արեւուն ուղ-
ղածիդ՝ այսինքն շիտկէ շիտակ վերէն վար
զարնող ճառագայթներուն ու ժը շատ կը
տկարանայ ու անով այն երկիրներու պրտ-
զարբերութիւնը կը յաջողի: Այրեցեալ
գօտւոյն անդիի (հարաւային) երկիրնե-
րուն անձրեւային ժամանակը մեր ձմե-
ռան ամիսներուն մէջ կ'իյնայ:

Բ Ա Ր Ո Յ Ը Կ Ա Ն

Ազգու օրինակ:

Գեներալի հարուստ քաղաքացիներուն մէկը ոտնացաւով (նիւրիս) ախտացած ըլլալուն, գիշեր ու ցորեկ սուկալի ցաւերով կը տանջուէր: Աս մարդը հեղ մը ծովու վրայ ճամբորդութիւն քրած ատեն՝ Տրիպոլիսի ծովահէններու ձեռքն ինկաւ. գերի եղաւ. ու գերութեան մէջ տարիէ մ'աւելի ապրելէն ետքը շատ ստակով իր ազատութիւնը ստացաւ եւ իր քաղաքը դարձաւ: Հոս երբ որ իր ոտնացաւէն բոլորովին առողջացած հանգիստ եւ զուարթ կը պարտէր, իր քաղաքակիցներն՝ որոնք իր առաջուան ու զարմելի վիճակը գիտէին՝ ու շատ հեղ գեսպակով (նիւրիսով) իր ծառաներէն ասդին անդին տարուիլը տեսած էին՝ ապշած զարմացած չէին կրնար իմանալ թէ ինչպէս գերութեան մէջ անանկանբուժելի հիւանդութենէ ազատեր է: Ուստի ամէն ոտնացաւոտները ժողովեցան եկան իրեն ու ազաչեցին՝ որ Աստուծոյ սիրուն համար իրենց ըսէ՝ թէ ինչպիսի գեղով այն սոսկալի ախտէն բժշկեցաւ: Ան ալ ըսաւ. «Յօժար կամօք կը կատարեմ բաղձանքնիդ. իմ առած գեղը շատ պարզ բան մըն էր, որուն գեղադիրը

(բէզէթա) ահա աս է. «Ա՛ն ամէն օր Չէ
 հարուած գաւազանի. քանի մը փողի
 (աբճէ) հաց ու սափօր մը ջուր. ուրիշ
 բան հարկաւոր չէ» : Աս դարմանն իմ
 սանացաւս բոլորովին բժշկեց. վասն զի
 քանի որ տունս տեղս եղած ատենս մե-
 ծահաց սեղանի առջեւ տեսակ տեսակ
 համագամներով օրերս կ'անցունէի՝ աս
 ձանձրանալի հիւրէն հանգիստ ու ազատ
 չէի կրնար բլլալ. բայց երբ որ գերու-
 թեան մէջ ան դեղագիրին համեմատ ա-
 պրելու պարտաւորեցայ, ինքն ալ իս
 թողուց գնաց : —

Առգովհիոս ԺԱ. Գաղղիայի Թա-
 գաւորը օր մը անտառներու մէջ որսի
 դացած բլլալով՝ սաստիկ անօթեցած
 աղքատ գեղացւոց մը հիւղը մտաւ եւ
 ուտելու բան մ'ուզեց : Խեղճ գեղացին
 ուրիշ բան չունենալով քանի մը հատ
 եփած կարմիր տակ (բանձար) անօր առ-
 ջին դրաւ, որն որ Թագաւորը մեծ ա-
 խորժակով կերաւ : Գուրս ելած ատենը
 գեղացւոյն աղէկ պարգեւ մը տալէն ետքն
 րաւ՝ որ եթէ Փարիզ գալու բլլայ՝ իր
 պալատը գայ իրեն այցելութիւն ընէ :
 Գեղացին աս հրաւերն աղէկ միտքը պա-
 հեց : Քանի մը տարի անցնելէն ետքը
 առիթ մը պատահելով՝ Փարիզ գնաց
 ու միտքը դրաւ Թագաւորին այցելու-

Թիւն ընելու : Քայց իր սիրելի կարմիր
տակն ալ շմռնալով՝ անկից ալ մէկ
քանի հաս ընտրեց հետն առաւ , որ
Թագաւորին իբր ընտիր համագամ մը
ընծայէ : Գնաց պալատն ու երբ որ Թա-
գաւորին առջեւն ելաւ՝ գրպանէն զգու-
շու Թեամբ ճերմակ Թաշկինակ մը հա-
նեց , որուն մէջ խաշոր ու աղււոր կարմիր
տակ մը փաթտուած էր , զորն որ քաղա-
քավարու Թեամբ Թագաւորին ներկայա-
յուց : Թագաւորը բարեսիրտ զեղացւոյն
բարի կամքին վրայ ուրախանալով՝ ըն-
ծան սիրով ընդունեցաւ ու ընծայաբե-
րին հազար դոպէս պարգեւեց : Աս բանս
հոն ըլլալ ազահ պալատականներուն
մէկը տեսնելով՝ արտաքոյ կարգի զար-
մացաւ ու մտածեց՝ որ եթէ Թագաւորն
անպիտան կարմիրտակի մը համար այն-
չափ մեծ պարգեւ ու վարձ կու տայ , ար-
դեօք Թանկագին ընծայի մը , ինչպէս
ընտիր ձիու մը համար , որչափ մեծ պար-
գեւ ու վարձ պիտ' որ տայ : Աս մտածելով
շուտ մը գնաց իր ախոսը , իր ձիերուն մէ-
ջէն ամենէն ընտիրն ու ազնիւը զատեց ու
Թագաւորին ընծայեց : Թագաւորն որ
իր մարդիկն աղէկ կը ճանչնար ու աս յան-
կարճական ընծային ու սկից յառաջ գալն
խմայաւ , այլ եւ այլ խօսքերով շնոր-
հակալ եղաւ պալատականին ու այն ա-

զուոր ձիուն հատուցում՝ նոյն կարմիր
տակը՝ զորն որ գեղացին իրեն ընծայած
էր՝ անոր պարգեւեց ըսելով. «Նայէ, այն-
պիսի ազուոր ձիուն համար քեզի ուրիշ
ինչ բանով արժանաւոր հատուցում
կրնայի ընել, քան թէ այսպիսի կարմիր
տակով մը, որն որ ինձի հաշար դալե-
արժած է,» : —

Ազնուական մը Գերմանիայի ա-
նուանի իշխանապատիւ եպիսկոպոսի մը
աղաչեց իր որդւոյն կնքահայր ըլլալ :
Եպիսկոպոսն անոր աղաչանքն ընդունե-
ցաւ, ու մկրտութենէն քանի մը օր ետ-
քը՝ մեծամեծաց սովորութեան համա-
ձայն՝ իր սանին համար պարգեւ մը խաւ-
րել ուզելով՝ իր սենեկապետին արկղիկ
մը տուաւ՝ որուն մէջ այն պարգեւը դրած
էր՝ ու այն ազնուականին տունը խաւրեց :
Ազնուականը շուտ մը արկղիկն առաւ ու
բացաւ եւ տեսաւ որ անոր մէջ քանի մը
ողկոյզ խաղող կայ : Աօր վրայ սաստիկ
վշտանալով՝ արկղիկը գոցեց ու բարկու-
թեամբ բերող սենեկապետին տուաւ
ըսելով. «Թէ որ իշխանն իր սանին հա-
մար խաղողէն ուրիշ պարգեւ չունի,
թող առնէ զանոնք ինք ուտէ,» : Սենե-
կապետը բերաւ արկղիկն եպիսկոպոսին
եւ տուաւ, որուն վրայ իշխանն ամենեւին
չայլադիտելով բռաւ. «Ի՞նչ որ իմ սանս

չուզեց ընդունել, [Թող աղքատներուն տրուի,, : Աս ըսելէն ետքը խաղողի սղկոյզներն արկղիկէն դուրս հանեց ու անոնց տակն ըլլող Պարզեւաբաշտու-
թեան գիրը՝ որով իր սանին իր խիտ աղուորպալատներուն մէկը կը պարզեւէր. դուրս առաւ պատուեց եւ ուրիշ դրով մը սահմանեց որ ան պալատին գինն աղքատաց հիւանդանոցին՝ զորն որ ինքը շինել տուած էր՝ եկամուտք ըլլայ : —

Գեղացի մը իրիկունը դաշտէն տուն դարձած ատենը՝ կը տեսնէ՝ որ տանը դրան առջին երիտասարդ մը նստեր է. կը հարցունէ անոր. ինչո՞ւ համար հոս նստեր ես, իրիկուն եղած է, ինչո՞ւ տուն մը չես մտներ : Երիտասարդը կը պատասխանէ. ս՛հ բարեկամ, ես սովորութիւն մ'ունիմ, որուն մարդ մ'ալ չի-հաւնիր, ուստի եւ ոչ ոք կ'ուզէ իս իր տունն առնուլ : Գեղացին կ'ըսէ. ըսէ՛ ինձի ի՞նչ է այդ քու սովորութիւնդ : Ան ալ կ'ըսէ. Աս է՝ որ ամէն մարդու ճշմարտութիւնը յայտնի կը զրուցեմ : Գեղացին խնդալով կ'ըսէ. ատիկայ շատ աղէկ սովորութիւն մըն է, եկու մտի՛ր իմ տունս, դուն ինձի շատ հաճոյական հիւր մըն ես : Տունը մտածնուն պէս գեղացին կնկանը կ'ըսէ. շուտ մը մեղի աղէկ ընթրիք մը պատրաստէ, տես պա-

տոււական Տիւր մը բերի: Երբ որ ամէն
բան պատրաստեցաւ, ու նստան սկսան
ուտել եւ այլ եւ այլ նիւթերու վրայ խօ-
սիլ, երիտասարդը տեսաւ՝ որ գեղացւոյն
մէկ աչքին վրայ մաշկ (շաբ) մը կար: ա-
նոր կնիկը միայն մէկ ողջ աչք ունէր.
Իսկ իրենց տան կատուն՝ որ կրակարանին
քովը նստած էր՝ շարաւոտ աչք մ'ու-
նէր: Քիչ մը խօսելէն ետքը՝ գեղացին
ըսաւ երիտասարդին՝ բարի Տիւր, գուն
ամէն տեղ ու ամենուն ճշմարտութիւնը
կ'ըսես, Տիմակ ինձի ալ ըսէ ճշմարտու-
թիւնը: Երիտասարդը կ'ըսէ. «Տ, պա-
տուական Տիւրընկալուս, թէ որ ըսելու
ըլլամ՝ պիտ'որ բարկանաս ու ինձի սրը-
դողիս: Չէ, չեմ սրդողիր, կ'ըսէ գեղա-
ցին: Անատեն կ'ըսէ երիտասարդը. Գուն,
քու ամուսինդ ու ձեր կատուն ամէնք-
սիդ մէյտեղ երեք աչք ունիք: Գեղա-
ցին ասիկայ լսածին պէս, կրակարանին
շահը (+խ-բէկ) կ'առնէ ու շուտ մը բար-
կութեամբ երիտասարդը տնէն դուրս
կը վաւրնտէ: —



Քռաժներ:

Ապրիլն երազ տեսնել ըսել է, իմաստութեամբ ապրիլը՝ հաճոյակիան երազ տեսնել:

Մեր կեանքը՝ սերախութեան ու վշտաց մշտնջենաւոր յաջորդութիւն մըն է. սվ որ աս յաջորդութեան մէջ միակերպ կը վարուի ու ամէն բանի մէջ վախճանին միտ կը դնէ՝ կրնայ անխռով կեանք անցընել:

Կեանքը բանաւորապէս վայելելու արհեստը՝ անիկակ աղէկ կարգի դնելու, եւ երբեք անօգուտ բաներու փափագ չունենալու վրայ կը կայանայ: —

Բարեկամ չունեցող մարդը մինակ կ'ապրի. աշխարհք իրեն համար ուրիշ բան չէ՝ բայց եթէ ընդարձակ անապատ, ու աքսորանաց եւ տխրութեան տեղ մը:

Սվ որ իր բարեկամն՝ անոր պակասութիւններուն շնայելով՝ սրտանց չի սիրեր՝ բարեկամ մ'ալ ունենալու արժանի չէ:

Բարեկամի մը շողաքորդութիւնն այնպէս վտանգաւոր է՝ ինչպէս թշնամւոյ մը զրպարտութիւնը. իմաստուն մարդը զրպարտութիւնը հայլի մը կը սեպէ:

Մարդուն ամենէն աւելի պարծանքն ան է՝ որ կարող ըլլայ ներքին

Համոզմամբ ըսել, աշխարհքիս վրայ մարդ մ'ալ չկայ՝ որուն ես թշնամի ըլլամ: —

Աղքատաց ձեռքը բերրի երկիր մըն է, իր բարերարներուն շատ ու շուտ պատուղ կու տայ:

Աղքատը դէպ ի երկինք տանող ճամբայ մըն է, աս ճամբէն չչեղելու ու չհեռանալու համար բարերարութիւնը ձեռքէ թող տալու չէ:

Բարերարութիւնները պատուոյ արձաններ են՝ զորոնք բարերար մը իր բարերարեալներուն սրտին մէջ կը կանգնէ:

Ազնիւ բարք ունեցող մարդն ուրիշներէն ընդունած բարերարութիւնն երբեք չիմսռնար, իսկ իրեն ուրիշներուն ըրածը դիւրաւ կը մոռնայ:

Ազաճն ուրիշ բան չէ՝ բայց եթէ գողերու համար գանձանակ ու դրամոց արկղ, իր ազգականաց համար՝ կուուոյ գրգռիչ, ու շատերուն համար՝ նախանձու պատճառ: —

Մարդուն պատկերն իր գործքերը կը նկարեն:

Բարի գործքի մը պատճառած հաճութիւնն ուրիշ ամէն կերպ հաճութեանէ մեծ է:

Բնէ ինձի քու զբաղմունքդ ինչ է, ու ես քեզի ըսեմ՝ դուն ինչպիսի անձ պիտ'որ ըլլաս:

Ո՛վ որ միշտ ան բանին վրայ կը խօսի՝ զորն որ կ'ուզէ ընել, կամ քիչ կամ ամենեւին ոչինչ կը գործէ :

Աշխատասիրութիւնը ճշմարիտ գանձ մըն է. իրեն միշտ ընկեր կ'ըլլան գոհութիւնն ու բախար :

Քիչով գոհ ըլլալը կարծ ու զուարճալի ճամբու մը կը նմանի, որն որ շատ հաճութիւնն ու քիչ աշխատութիւն կը պատճառէ : —

Ո՛վ որ սովորած է զրկանքին շուտով ներելու՝ չիկրնար դիւրաւ վշտանալ ու զրկանք զգալ :

Օրպարտութիւնը լռեցրնելու կամ ստելու համար ամենէն աղէկ միջոցը անիկայ դրսանց չլսելու եւ չիմանալու պէս ձեւանալն է. ինչու որ անոր դէմ եռանդեամբ ու զայրացմամբ ինք զինք պաշտպանելը գրեթէ միշտ նախատինք ու վնաս կը բերէ : —

Աւրիշի հետ զգուշութեամբ կենակցէ. երբ որ բարի մարդ մը չար մարդու հետ կը կենակցի՝ հասարակօրէն չարը բարիէն աղէկութիւն չիտորվիր, հապա բարին չարէն գէշութիւն կը սորվի :

Բսէ ինձի որոնց հետ կը կենակցիս, ու ես քեզի ըսեմ՝ դուն ո՞վ ու ինչպիսի մարդ ես : —

Առաքինի մարդը միշտ խոնարհ կ'ըլ-

լայ, ու կը նմանի այնպիսի ծառի մը՝ որն
որ իր ճիւղերը դէպ ի վար կը խոնարհէ՝
ինչու որ պտղով լեցած ու ծանրացած են:

Առաքինութեան ճամբուն վրայ
հանդիպող արգելքներուն համբերու-
թեամբ յաղթելն ազնիւ սրտի մը ընտիր
ձիրքերուն մէկն է ու պատուաւոր վախ-
ճանի կը հասցընէ:

Համբերութիւնն ամէն դռները
բանալու յարմար բանալի մը, ու ամէն
չարեաց դէմ զօրաւոր դարման մըն է:

Օգտատու թիւնը (չափով ուտել
խմելը) առաքինութեանց մայր է, իսկ
որկրամսլութիւնը մեծամեծ մոլու-
թեանց սկիզբ է:

Խոհեմութիւնն առաքինութեանց
կարգ, չափ, վայելչութիւն ու հաստա-
տութիւն կու տայ:

Աշխարհք զիմաստունը կը փնտռէ,
իսկ իմաստունը առանձնութիւն կը
փնտռէ:

Սրտի մաքրութիւնն երիտասար-
դութեան պարտիզին խիստ ազուր ծա-
ղիկն է:

Վայրկեանները մի փախցըներ, շատ
անգամ անոնց թեւերուն վրայ երկնաւոր
երջանկութիւնը կը հանդչի:

Մ Ա Ն Ի Ա Վ Է Պ Ք

Տղոց համար:

Տղաւ մը հարցուց իր վարժապետար թէ ինչո՞ւ համար քրիստոնէական կրօնն առաքելոց ժամանակն այնպէս շուտով աշխարհ քիս ամէն դին տարածեցաւ հասաւ: Տղան քիչ մը մտածելէն ետքը պատասխանեց. «Ան ատենները դեռ ճամբորդները անցագրի կարօտութիւն չունէին, անոր համար առաքելներն ալ ուղածնուն պէս առանց ժամանակ կորսունցընելու ասգին անդին ճամբորդութիւն կ'ընէին» : —

Վարպետ մը հարցուց իր աշկերտներուն. «Ինչո՞ւ համար Ադամ ու Եւա դրախտէն դուրս վաւրնտուեցան» : Աղքատ տղայ մը (որն որ փորձով աեսած էր իրենց քանի մը հեղ նստած տնէն գուրս վաւրնտուիլը,) ամենէն առաջ նշան տուաւ որ ինքն անոր պատճառը կրնայ տալ : Վարպետը հրամայեց՝ որ ըսէ տղան ալ համարձակութեամբ ըսաւ. «Անոր համար վաւրնտուեցան՝ որ տան վարձքը չէին կրցեր վճարել» : —

Իպրոցաց վերակացու մը ընդհանուր քննութեան ժամանակ հարցուց դպրոցի մը տղոց. «Մոլութիւնն ի՞նչ է» : պատասխանն տուաւ մէկը. «Մոլորու-

Թիւն եղած մեզք մըն է,, : Ա երակացուն .

“Շատ աղէկ . ուրեմն անձնատպանու-

Թիւնն ալ մտլուԹիւն մըն է,, : Բոլոր

տղաք մէկ բերան կը պատասխանեն .

“Այո՛, Թէ որ սովորուԹեան կը դառնայ,, :

Ա արժապետ մը քննուԹեան ա-

տեն հարցուց տղու մը , Թէ արդեօք

Թշնամիներն ալ սիրելու պարտական

ենք : Տղան լուեց , չկրցաւ պատշաճական

պատասխանը տալ : Ա արժապետը տղուն

միտքն արժընցունելու եւ յարմար պա-

տասխանը գտնել տալու համար ըսա-

ւանոր . “Անշուշտ գիտես՝ Թէ բարեկամ

ու Թշնամի ի՞նչ ըսել է,, : Տղան հոս ալ

չկրցաւ պատասխան մը տալ : Ան ատեն

վարպետն ըսաւ . “Միտ գիր , ու քեզի

հասկրցունեմ Թէ բարեկամն ու Թշնա-

մին ի՞նչ է : Թէ որ գետի մը քով խա-

ղալու ատենդ՝ մէկը գայ զքեզ ետեւի

կողմանէ ջրին մէջ հրէ՛, ձգէ , ան մարդն

ի՞նչ կ'ըսուի,, : Պատասխան . “Անիկայ իմ

Թշնամիս կ'ըսուի,, : Ա արպետը . “Շատ

աղէկ պատասխանեցիր , տղան . հիմակ

ըսէ ուրեմն Թէ՛ հապա քու բարեկամդ

ով է,, : Տղան շուտ մը կը պատասխանէ .

“Ո՛վ որ իս առջեւի կողմանէ ջրին մէջ

կը հրէ կը ձգէ,, : —

Օ ինուորոց քահանայ մը զինուորի

մը տղուն հրամայեց որ “Հայր մեր , ա-

ղօթքն ըսէ : Տղան առ խօսքերը կ'ըսէ .
“Հայր մեր, որ յերկինս ես”, քահանան
անոր խրատ տալու առիթ առնելու հա-
մար՝ կը հարցընէ . “Աւրեմն առ ըսած
խօսքերուդ նայելով քու հայրդ ո՞ւր է”,
Տղան շուտ մը կը պատասխանէ . “Իմ
հայրս այսօր տունը չէ . բոլոր օրը պէտք է
որ պահանորդութեան տեղը կենայ”, —

Արժապետ մը իր աշկերտներուն
հասկըցունել կ'ուզէր՝ թէ իրաւունքն ու
անիրաւութիւնն ինչ է . ուստի անոնց
մէկուն հարցուց՝ թէ “ինչ է անիրաւու-
թիւնը”, Տղան չկրցաւ պատասխան տալ :
— Հիմակ ես քեզի կը հասկըցունեմ թէ
անիրաւութիւնն ինչ է . միտ դիր, ըսենք՝
թէ Սարգիսը՝ որ քու քովդ նստած է՝
իր մօրմէն կտոր մը կարկանդակ առած
է, ու դուն զանիկակ անոր ձեռքէն բռ-
նութեամբ կ'առնես . — ըսէ, ինչ կ'ը-
նես”, Տղան համառօտիւ պատասխա-
նեց . “Շուտ մը կ'ուտեմ”, —

Արժապետ մը իր աշկերտներուն
երկրագունդին ձեւը ցուցընելու համար
իր հաւկըթածեւ կլոր քթախոտի տու-
փը ցուցընելով ըսաւ . “Նայեցէք, տղաք,
երկրագունդին ձեւն ըստ ամենայնի իմ
տուփիս ձեւն է”, Աս վարժապետը դրժ-
բախտութեամբ կիրակի ու տօն օրերը

զորն որ աշկերաններն անոր ձեռքը կը տեսնէին: Ընդհանուր քննութեան օրը խեղճը իր աշկերաներուն համութեան վրայ ապահով ըլլալով հարցուց: “Երկրագնդին ձեռն ի՞նչպէս կամ ո՞րն է, ”: Տղոց մէջէն մէկը շուտ մը պատասխանեց. “Քանի օրերը՝ կլորակ է, իսկ կիրակի ու տօն օրերը՝ քառակուսի, ”: —

Աղքատ վարժապետ մը բթամիտ որդի մ'ունէր, որն որ սորվելու մէջ ամենեւին յառաջագիմութիւն մը չէր կրօցեր ընել. ի վերայ այսօր ամենայնի քննութեան համար դպրոցաց վերակացուին առջին տարուեցաւ, որովհետեւ իր հօրն արդեանց համար եւ ժողովրդեան ալ զինքը յառաջացրնելու բաղձալուն պատճառաւ ուղեցին մեծերն իրեն դիւրին եղանակաւ քանի մը շատ դիւրին հարցմունքներ ընելով՝ պաշտօնի հասցընել: Ուստի քննիչը իբր կատակի համար աս հարցումն ըրաւ. “Նոյ երէք որդի ունէր, Սէմ, Քամ ու Յաբէթ, ասոնց հօրն անունը ի՞նչ էր, ”: Պատասխան — չկայ: Այսչափ բթամտութիւնը կարգէ գուրաբան մ'ըլլալուն, հարկ եղաւ զինքն իբր բարրովին անընդունակ անձ մը մէկդի խաւրել: Տուն դառնալէն ետքը սկսաւ հօրը տրտունջ ընել ու քանքատել: Հայրն անոր ապշութիւնը երեսը զարնելէն ետքն

շատ իրեն. “Նայէ, միտ դիր, մեր դրացի Չաղացպանն երէք որդի ունի, Յովհաննէս, Գէորգ ու Պետրոս. ո՞վ է ատոնց հայրը: Արդին շուտ մը պատասխանեց. “Չաղացպանը, Չաղացպանը,, : — Միամիտ հայրը “Գտաւ, գտաւ,, պռապով, ուրախութեամբ վազեց գնաց դպրոցաց վերակացունն ու աղաչեց որ նորէն քննութիւն մ'ալ ընէ. ինչու որ իր որդին առջի հեղ վախէն շփոթելով չկրցաւ ըստ կարգի պատասխանել: Աւերակացուն անոր աղաչանքին զիջանելով, նորէն իր առջի հարցումը կրկնեց. “Նոյ երէք որդի ունէր, Սէմ, Քամ ու Յաբէթ. ատոնց հայրն ո՞վ էր,, : Քննուելին շուտ մը պատասխանեց. “Չաղացպանը, Չաղացպանը,, : —

Տղայ մը իր վարժապետին կու գայ ձեռքը շիշ մը գինիով: Աւարժապետը կը հարցընէ իրեն. “Ի՞նչ բերիր ինձի, տղաս,, : Տղան կը պատասխանէ. “Հայրս շատ բարեւ կ'ընէ ու աս գինինն Հրամանոց կը խաւրէ, որ ուրախութեամբ խմէք,, : Աւարժապետը շնորհակալ ըլլալով կ'ըսէ. “Ի՞նչ հարկ կար որ հայրդ ինձի համար ստակէն ելլեր, ծախք ըներ,, : — Չէ, վարժապետ, հայրս ստակով չգնեց աղ գինին, հապա պարգեւ առաւ, բայց համը նայեցաւ ու բոտ՝ որ իրեն համար

շատ թթու է, ուստի Հրամանոց խաւ-
րեց), : —

Պեղացի մը գիշերանց ծանր հիւան-
դացաւ ու մեռնելու վտանգի մէջ ին-
կաւ . ամուսինն իր սրդին շուտ մը ժո-
ղովրդապետին խաւրեց՝ որ դայ հիւանդը
խոստովանեցրնէ ու անոր վերջին թոշակը
տայ : Տղան գնաց , ու փորձեց տեսաւ որ
ժողովրդապետին դուռը գոց էր ու լոյս
ալ չէր երեւար . ինք իրեն ըսաւ . ի հար-
կէ ժողովրդապետը քնացած է , պէտք
չէ որ զինքն անհանգիստ ընեմ : Աս մտա-
ծելով դրան առջեւը նստաւ , եւ քնաս
ըլլալուն՝ քունը տարաւ , խորունկ քնա-
ցաւ : Աստու ըլլալէն ետքը ժողովրդա-
պետը դուռը բացաւ ու անոր առջեւը
քնացող տղան աեանելով՝ արթնեցուց
զինքն ու հարցուց թէ երբ ու ինչու հետե
եկեր է ու կը քնանայ : Տղան աշուրները
չփելով պատասխանեց . «Գիշերը հայրս
ծանր հիւանդացաւ , մայրս իս Հրամա-
նոցը խաւրեց՝ որ դաս հօրս վերջին թո-
շակը տաս . բայց ես երբ որ եկայ դուռը
գոց դասայ , մտածելով որ Հրամանքդ կը
քնանաս , շուզեցի արթնեցունել ան-
հանգիստ ընել » : Քահանան շուտ մը
փութաց հիւանդին տունը վազեց . բայց
անիկայ արդէն անդիի աշխարհք դա-
ցած էր :



ՔԱՆԻ ՄԸ ՅՈՒՆՆԱՒՔ

Ըստ վերջին կարգաւորութեան:

Պուլիտին Աղէրսանդրէ, Գաղղիական շոգենաւը կ'ելլէ երկու ուրբաթ մէյմը՝ կէսօրէն ետքը. 16 օր ճամբայ կ'ընէ. Ա. կարգ՝ 294 Ֆրանգ. Բ. 260. Գ. 150. Դ. 75. Իսկ մինչեւ Պէյրութ միայն 12 օր ճամբայ կ'ընէ. Ա. 250 Ֆր. Բ. 175. Գ. 125. Դ. 75:

Պուլիտին Ջոհաննէ, 1—1½ օր. Գաղղիական շոգ. երկու ուրբաթ մէյմը. Ա. 90 Ֆրանգ. Բ. 54. Գ. 36. Դ. 22. — Աւստրիական շոգ. ամէն երկու շաբթի ու չորեքշաբթի կէսօրէն առաջ. Ա. 29 Ֆիորին. Բ. 20. Գ. 9. — Անգղիական շոգ. ամէն ամսոյն 17ին. Ա. 30 Ֆ. Բ. 20. Գ. 10:

Պուլիտին Թրէտտ, Աւստրիական շոգ. Շիրայի ու Գորֆուի վրայէն, շաբաթ օր կէսօրէն առաջ կ'ելլայ, հինգշաբթի կը հասնի. Ա. 118 Ֆիորին. Բ. 87. Գ. 58:

Պուլիտին Մարտիչ, Գաղղ. շոգ. Բիրեոսի ու Մէսինայի վրայէն. չորեքշաբթի կէսօրէն ետքը կ'ելլայ, երկրորդ հինգշաբթի կը հասնի. Իզմիրի, Մալթայի վրայէն՝ հինգշաբթի կ'ելլայ ու երկրորդ շաբաթ օրը կը հասնի.

Ա. 472 ֆրանգ . Բ. 337 . Գ. 218 . Դ. 134 .
Մարտիկի ալ Փարիզ շոգեկառքով 2 ժա-
մու մէջ կ'երթըցուի . Ա. 96 ֆրանգ . Բ .
72 . Գ. 53 . Փարիզի ալ Լոնտոն 16 ժա-
մու մէջ . Ա . 76 ֆրանգ . Բ . 55 :

Պուլիսի Աստու . Գաղղ . շոգ . շարաթ
կ'ելլայ կէսօրէն ետքը ու կիրակի առտու կը
հասնի : Աստուի կ'ելլէ չորեքշաբթի կէս-
օրէն ետքը ու հինգշաբթի կէսօրէն յառաջ
Պուլիս կը հասնի : — Աստուիական շոգ . չո-
րեքշաբթի ու շաբաթ կէսօրէն ետեւ կ'ելլէ .
Ա . 22 ֆիորին . Բ . 17 . Գ . 7¹/₂ :

Պուլիսի Աստու . Աստուիական շոգ . ա-
մէն չորեքշաբթի . Ա . 45 ֆի . Բ . 34 :

Պուլիսի Ալեքսան . Թրիեստի վրայէն 7 օ-
րուան մէջ կրնայ հասնուիլ Թրիեստէն շո-
գեկառք հեծնելով , որն որ օրը 3 անգամ
կ'ելլայ եւ շուտ գացողը 16 ժամու մէջ
Վիեննա կը հասնի . Ա . 34 ֆիորին . Բ . 23¹/₂ .
կամաց քալողը 24 ժամու մէջ . Ա . 26 ֆիոր .
Բ . 19¹/₂ . Գ . 13 : Աս գիներուն վրայ Պու-
սէն մինչեւ Թրիեստ եղած գիները աւելցը-
նելու է ամբողջը գտնելու համար : Պուլի-
սի Ալեքսան Գանուրի կողմանէ գալով շուտ
քալողը կ'ելլայ չորեքշաբթի ու 9 օրուան
մէջ կը հասնի . Ա . 145 ֆիոր . Բ . 104 . իսկ
կամաց քալողը 14 օրուան մէջ . Ա . 94¹/₂ . Բ .
68¹/₂ . Գ . 40¹/₂ . Վիեննայի ալ Փարիզ շո-
գեկառքով 56 ժամու մէջ կ'երթըցուի .
Ա . 83 ֆիորին . Բ . 63 :

Պուլիսի Տրապիզոն . Աստուիական շոգ .
երկուշաբթի կէսօրը կ'ելլայ ու կը հասնի
հինգշաբթի առտու : Տրապիզոնի կ'ելլայ կի-
րակի կէսօր . Ա . 51 ֆիորին . Բ . 35 . Գ . 15 :

Իշխրիս Ալեքսանդրի . Գաղղ . շոգ . եր-

կու երեքշաբթի մէյ մը կէսօրէն ետեւ . Ա .
250 Ֆրանգ . Բ . 187 . Գ . 132 . Գ . 72 : —

Աւսարիական շոգ . երկու շաբաթը մէյ մը .
Ա . 68 Ֆիօրին . Բ . 46 . Գ . 20 :

Իշտրէն Թրէտոյ Շիրայի ու Գորֆուի
վրայէն , Աւստ . շոգ . շաբաթ կէսօրէն ետեւ
կ'ելլայ . Ա . 100 Ֆիօրին . Բ . 76 . Գ . 52 :

Իշտրէն Պուլի , Գաղղիական շոգ . երեք-
շաբթի կէսօրէն ետեւ կ'ելլայ . Ա . 90 Ֆրանգ
Բ . 54 . Գ . 36 . Գ . 22 : — Աւսարիական
շոգ . կիրակի եւ ուրբաթ կէսօրէն յառաջ
կ'ելլայ ու երեքշաբթի եւ կիրակի առտու
կը հասնի . Ա . 29 Ֆիօրին . Բ . 20 . Գ . 9 :

